XXIII

ՆՈՐ-ԴԱՐ

XXIII

[illegible]

№15 Շաբաթ, 28 Յունուարի

1883 — 1906

Շաբաթ, 28 Յունուարի №15

Բաժանորդագինը պատի ծախքով տարեկան 10 ր., վեց ամիսը՝ 6 ր., ամիսը 1 ր., համար՝ 5 կ.։
Բաժանորդ են գրւում Թիֆլիսում՝ միմիայն խմբագրատանը։
Խմբագրութեան գրասենեակը՝ Գրիբոեդովսկայա փողոց, տուն № 14.

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ“
կամ Tiflis (Caucase), Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամէն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով։
Յայտարարութիւնների բառին 2 կ., ռեկլամների համար առանձին համաձայնութեամբ։ Առաջին երեսում յայտարար. վճարը՝ կրկնապատիկ է։

1906

ՆՈՐ-ԴԱՐ

(ՔՍԱՆԵՒԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Այն 1906 թուին լոյս կըտեսնի քաղաքական-գրական ամենօրեայ «Նոր-Դար»-ը նոյն ծրագրով և նոյն ուղղութեամբ։

Ամբողջ ռուս կայսրութեան մէջ «Նոր-Դար»-ի տարեկան բաժանորդագինն է 10 ր., վեց ամսուանը՝ 6 ր., ամսականը՝ 1 ր., համար՝ 5 կ.։ Արտասահմանի բաժանորդը վճարում է տարեկան՝ 40 ֆրանկ, վեց ամիսը՝ 25 ֆրանկ։

Յայտարարութիւններ ընդունւում են և օտար լեզուներով, բառը 2 կ., առաջին երեսումը 4 կ.։ Շատ անգամ կրկնուող յայտարարութիւնների համար մեծ զիջումն։

Բաժանորդ գրւում են Թիֆլիսում՝ «Նոր-Դար»-ի գրասենեակում, Գրիբոեդովսկայա փողոցում, № 14.

Փոստով «Նոր-Դար»-ի հասցէն՝ Тифлисъ. ред. „Норъ-Даръ“, կամ՝ Tiflis (Caucase), rédaction «Nor-Dar».

Ծանօթութիւն.—Թերթիս խմբագիրը մի տարի առաջ Պետերբուրգում իրաւունք է ստացել ընդարձակելու թերթի ծրագիրը, տալով թերթի մէջ պատկերներ, և առանձին ծրագրով լոյս հանելու շաբաթական պատկերազարդ յաւելուած։ Հարկ ենք համարում ծանուցանելու՝ հէնց որ թերթի միջոցները ներեն, կըձեռնարկենք պատկերազարդ «Նոր-Դար»-ի հրատարակութեան և կուղարկենք «Նոր-Դար»-ի բաժանորդներին 10 րուբլի բաժանորդագնի հաշւում։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋՆՈՐԴՈՂ.—Օգնութիւն։
Հայ-թրքական կռիւը։
Գանձակի հայերի վիճակը։
ՔՐՈՆԻԿՈՆ.—Թիֆլիս։ Գաւառ։ Ռուսիա։ Արտասահման։
Պէտք է յարգել ժամանակի պահանջները։
Սահմանադրութիւնը թէ լինչակալութիւն։
«Ջրոյդ ի քոյոց քեզ մատուցանեն»։
ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ.— Բագու։
Նամակներ խմբագրութեան։
ՔԱՂՎԱԾՔ.—Ընդհանուր ընտրողական իրաւունքը Աւստրիայում։ Պատերազմի ձայները։ Մամուլի ազատութիւնը Պարսկաստանում։
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

Թիֆլիս, 27 յունուարի 1906 թ.

ՕԳՆՈՒԹԻՒՆ

Մինթէ պէտք է պատմենք, մինթէ պէտք է բացատրենք այն նեղ, անճար, անել դրութիւնը, որի մէջ գտնւում է արիւնոտ հայութիւնը։ Մինթէ մարգարէ պէտք է լինենք գուշակելու համար, թէ ինչ է սպասում մօտիկ ապագայում տնից, գոյքից, ապրուստի միջոցներից զրկուած հայութեանը. քաղաքներում տներն աւերուած և գոյքը ոչնչացրած, խանութները հրոյ ճարակ դարձած, ապրանքը յափշտակուած, գիւղերում՝ աշխատող կենդանիները թալանուած, ցորենի, գարու պաշարը ցրիւ տրուած, գիւղական խղճուկ խրճիթները, դաշտերն ու ցանքսի գործիքները բոլորը աւերուած։ Հայը իւր հարազատների անողորմ մահն ողբալով՝ նայում է անորոշ, մութ ապագային. երբ պէտք է վերջ լինի թշուառ օրերին. ինչո՞վ պէտք է պահպանէ իւր գոյութիւնը երեկ ունևոր, այսօր ապրելու միջոցներից զրկուած հայը։

Մէկ հայ ողբում իւր դառն վիճակը, հազա՜ր հայի գանգատն է, որ լսում ենք. բազմաթիւ գիւղեր են վերջին չքաւոր անել դրութեան մէջ, ողբում են իրենց բաղդը։

Ո՞վ պիտի օգնէ դրանց, կարօտեալներին, ապրելու և պատսպարուելու, այլ և իրենց օրական պարէնը վաստակելու համար ամէն միջոցներից զրկուած հայերին։

Հայը կօգնէ հային, այն հայը, որ թշուառութեան, պատուհասների ենթարկուած օգնութեան կարօտ օտարին օգնել է. այն հայը, որ օգնել է սերբին, ռուսին, վրացուն. այն հայը, որ գերմանացիների կայսր Բարբարոսային և նրա զօրքին օգնել է իբրև քրիստոնեայ եղբայրների. այն հայը, որ կրակի, վառօդի և մուխի տակ ջուր է կրել ռուս զինուորի և զինուորութեան համար և ամեն կերպ օգնել է նրանց դործի յաջողութեան և նեղ դրութիւններից ազատել. այն հայը, որ հալածուել է վայրենի ասիացիներից իբրև քրիստոնեայ ժողովուրդ քրիստոնեայ Եւրոպայի կողմը պահպանելուն համար. վերջապէս այն հայը, որ այսօր խաչւում և նահատակւում է լաւ ռուսի՝ լաւ ձգտումներին ցոյց տուած համակրութեան համար այդ հայը կօգնի և պէտք է օգնի իւր թշուառ եղբօրը։

Բայց որ մէկին օգնի և ինչ չափով օգնի. թշուառների թիւն անհամար է, և թշուառութիւնը ծով է։

Սպասել օգնութիւն հային շըրջապատող ազգերից—դա իզուր կը լինի։ Սպասել օգնութիւն ռուսներից— այդ սովորութիւնը դեռ չէ մտել նրանց մէջ, և ինքը ռուս ժողովուրդը յեղափոխութեան բոլոր բարիքները վայելելով՝ այսօր կարօտ է օգնութեան։

Օգնութիւն պէտք է սպասել քրիստոնեայ Եւրոպայից, քրիստոնեայ Ամերիկայից։

Բարձրացնենք մեր ձայնը, թող լսեն ամենքը. թող կենդանիների համար հիւանդանոցներ հիմնող և արևելքի քրիստոնեաների վիճակը բարւոքելու համար միտինգներ կազմող Եւրոպան և Ամերիկան օգնեն հալածուած, նահատակուած և օրուայ ապրուստից զրկուած հայերին։

Ժամանակը հասել է. պէտք է լսէ արևմուտքը հայ ժողովրդի հառաչանքը և օգնութեան ձեռք մեկնէ օգնութիւն սպասող հային։

Օ՛գնութիւն, ամենից առաջ օգնութիւն։

ՀԱՅ-ԹՐՔԱԿԱՆ ԿՌԻՒԸ

ՇՈՒՇՈՒՑ յուն. 27-ին երեկոյեան ժամը 10-ին ստացանք հետևեալ հեռագիրը.

Զանգեզուրի գաւառը զօրք ուղարկուեց. հաշտութեան յանձնաժողովը այսօր մեկնեց այստեղից. գեներալ Գոլոշչապովը նոյնպէս մտադիր է այնտեղ (Զանգեզուր) ուղևորուելու։ Քաղաքը և գաւառը առայժմս խաղաղ է. կենսական մթերքներ հայոց համար դեռ չէ տարցուած. հաշտութեան յանձնաժողովը նոյնպէս մեկնեց Շուշուայ և Ջիբրաբայիլի գաւառները։

Առաք Նախկոպու

—

ՇՈՒՇՈՒՑ գեն. Գոլոշչապովից փոխարքայի անուան ստացուած են հետևեալ հեռագրները յունուարի 22-ից.

I. «Այսօր, առաւօտեան ժամը 9-ին, ընդունեցի Գորիսից վերադարձած հայ և մուսուլման ընտրեալներին, որոնք անձամբ տեսցին ինձ և գրաւոր կերպով հաստատեցին, որ շրջակայ բնակչութիւնն ուրախացել է հաշտութեան համար և թէ Շուշի-Գորիսի տրակտը բոլորովին ազատ է ու ապահով։ Զանգեզուրի գաւառապետին հրամայեցի Գորիս հաւաքել ազդեցիկ բէկերին այն տեղերից, ուր դեռ ևս չեն դադարել ընդհարումները, նրանց յայտարարելու համար, որ արդէն հիմնաւոր հաշտութիւն է կնքուած և որ նրանք միջոցներ ձեռք առնեն վերջնականապէս խաղաղեցնելու բնակչութեանը, յայտարարելով վերջնիս, որ յանցաւորները կըպատժուեն անխնայ կերպով։ Կարճ ժամանակից նոյն տեղերը կըճանապարհուեն Շուշուց ընտրուած անձեր նոյն նպատակով։ Երեկ երեկոյից ի վեր կըտրուած է հեռագրական հաղորդակցութիւնն Ագդամի և Եւլախի միջև. անհրաժեշտ կարգադրութիւնն է արուած ուղղելու. եթէ այսօր չվերականգնի հաղորդակցութիւնը, այն ժամանակ հեռագրները կուղարկեն Թիֆլիս։ Այսօր Շուշում կատարեալ անդորրութիւն է տիրում։ Հայերն արդէն համարձակօրէն գնում են թուրքերի մօտ և ընդհակառակը. կենսական մթերքների գները խիստ իջել են. ամեն օր մթերքներ են բերւում շրջակայ գիւղերից»։

II. «Պարտքս եմ համարում զեկուցանելու ձերդ պայծառափայլութեանը, որ մի քանի լրագրներում սուտ տեղեկութիւններ են հաղորդւում ինձ յանձնուած զօրքի գործողութիւնների մասին և մի հաղորդագրութիւն էլ արուած էր մինչև անգամ կանխաւ. այդ հաղորդագրութիւնը տպուած է Թիֆլիսի մի լրագրում այն օրուայ լոյս գնշերը, երբ զօրքն իսկապէս գործում էր Շուշու մօտ, և հաղորդուած են այնպիսի գործողութիւններ, որ զօրքը չի էլ կատարել. կատարուած գործողութիւնների մասին քամնելի զրպարտութիւն է հաղորդուած։ Կը հեռագրեմ ոստիկանութեան կառավարչին, որ յանցաւորները պատասխանատուութեան կանչուեն. ձերդ պայծառափայլութեանն ես զեկուցել եմ միմիայն լոկ ճշմարտութիւնը և դուրս չեմ գալիս ինձ տրուած հրահանգի սահմանից, միակերպ վերաբերուելով դէպի երկու կողմերն էլ. եթէ ով ևիցէ հակառակն ասէ, դա սուտ կըլինի»։

—

ՆՈՐ-ԲԱՅԱԶԻՏ, 26 յունուարի. — Թուրքերը յարձակուեցին Նոր-Բայազիտից 70 վերստ հեռու գտնուած մի հայ գիւղի վրայ։ Այստեղ յուզում է տիրում, շուկան փակ է։ Գաւառապետը մեկնեց անկարգութիւնները ճնշելու։ («Պետպրծ»)։

—

ԳԱՆՁԱԿԻՑ.—Այստեղ յունուարի 23-ին փոխ-նահանգապետի միջոցով հայերը վերադարձրին թաթարներին բաշչալուի և այլ գիւղերից գերած 12 կին և երեխաներ։ Սպասում ենք, որ թաթարներն էլ վերադարձնեն իրենց մօտ գտնուող 9—10 հայ գերիներին։ Սիրտ պատող տեսարաններ են, ինչ ժամանակներումն ենք ապրում։ Իշխանութիւնը կամաց-կամաց հայերից զէնք-պահանջում է, զինուելը արգելում է. մեծ և կարևոր հարց, ինչո՞վ և ինչպէս է նա ապահովում մեր կեանքը և կայքը։

—

ՇՈՒՇՈՒՑ.—գեներալ Գոլոշչապովը Թիֆլիսից ստացած հեռագրի համաձայն պէտք է գնայ ամբաձիզ և այլ զօրքով Զանգեզուր, որովհետև այն տեղի գիւղերը աւերուած են և մնացած գիւղերը նեղ վիճակի մէջ են։

—

Փախչելով Թիֆլիս է հասել Բագա գիւղացի 76 տարեկան մի ծերունի՝ Վերդի Տուչեան, որը խիստ ցաւալի գոյներով է նկարագրում իրենց գիւղի աւերը։ Նա նպատ է խնդրում Գանձակ գնալու համար, ուր թողել է իւր հարազատներին, և [illegible] Ո՞րտեղ է տաքինորդարանին կից հիմնուած նպաստամատոյց յանձնաժողովը։

ԳԱՆՁԱԿԻ ՀԱՅԵՐԻ ՎԻՃԱԿԸ։

ԳԱՆՁԱԿ, 22 յուն.—Գուբերնիէկեանի զերումից և ազատումից յետոյ կարծում էինք, որ թուրքերը վերջ կըդնեն իրենց հրէշային գազանութիւններին, բայց այս անգամ էլ սխալուեցինք. նրանք այնպէս ևրես են առել, որ ոչ մի խրատութիւն, ոչ մի հրաման չի ազդում նրանց վրայ, որովհետև այս բոլորը կատարւում է միայն ձևականութեան համար, և նրանք իրենց արարքի համար արժանի պատիժ չեն ենթարկւում։ Պ. Գուբերնիէկեանի յափշտակման դէպքից յետոյ, ամսիս 17-ին թուրքերը նորից գերեցին մի թշուառ հայի, որն անցած է եղել թուրքաց թաղը. նորից իրարանցում ընկաւ, նորից յուզմունք, իշխանութիւնը նորից «խիստ հրաման» արձակեց հային վերադարձնելու, և վերադարձրին նրան միայն ամսիս 18-ի առաւօտեան։

Նոյն օրը Բաղաքէնդ գիւղացի երկու ընտանիքներ սայլերով գալիս են լինում Գանձակ. որովհետև երկաթուղու ճանապարհն ընկած է թուրքերի մասով, ուստի խեղճ բաղաքէնդցիք գալիս են լեռներով. հէնց որ մօտենում են նրանք Ելենենդորֆ գաղութի մօտերքը (Գանձակից 8—9 վերստ հեռու), թուրքերը (Բաղմանլարի և այն տեղ ապրող Թոփալ-Հասանլու գիւղացի թուրքերը) յարձակւում են նրանց վրայ, սայլերն այրում, երկու հոգու էլ հետը, իսկ ինն հոգու (2 կին, 1 զառամաս աղջիկ և 6 մանր երեխաներ) գերի վերցնում տանում։ Թշուառ երեխաների հայրը (մի ծերունի մարդ) և մի ուրիշ տղամարդ փախչում ազատւում են.սրանց պատմելով, ծերունին առաջ է գալիս լինում. հէնց մօտենում է Այգեօրիլի կոչուող տեղում գտնուող մի ձորակի, նկատում է մի երկու հոգու, բաշլըղով գլուխները փաթաթած, որոնք հայերէն կանչում են նրան. «Եկ, եկ մեզ մօտ, մի վախիլ, հայեր ենք»։ Միամիտ գիւղացին հաւատում է ու գնում։ Բայց մօտենալուն պէս թուրքերը յարձակւում են ու հրացաններ ցոյց տալիս. թշուառը նոր է միայն իմանում, որ սխալուել է. այնուհետև թուրքերը, որոնք թաք կացած են լինում ձորի մէջ, յարձակւում են ու իրենց գործը տեսնում. այդ իսկ ժամանակ ծերունին ու միւս հայ գիւղացին փախչում գնում են հարևան հայ Ոսկանապատ գիւղն իմաց անելու։ Իսկոյն յայտնեցին այս դէպքի մասին Գանձակում հայերին ու իշխանութեանը, բայց արդէն ուշ էր. մինչև հիմա «զօրք ղրած միջոցներն» անհետանք մնացին, և գերիները կորան, երևի Գանձակի Բաղմանլար թուրքաց թաղում։ Ցաւալին ու զարմանալին այն է, որ խեղճ հայերի բարձրացրած աղմուկի վրայ գալիս են Ելենենդորֆ գաղութից 100-ի չափ կազակ զինուորներ, որոնք տեսնում են, թէ ինչպէս թուրքերը տանում են հայ գերիներին, ու չեն հետամուտ լինում թշուառներին ազատելու համար։ Այսպէս է առհասարակ վերաբերւում զօրքը դէպի հայերն ամեն տեղ և մեզ մօտ։ Բանն այն է, որ յիշեալ կազակների մի մասը, որը հէնց Ելենենդորֆումն է ապրում, այս քանի օրերս այն տեղով անցնող բոլոր հայ գիւղացիներին զինաթափ է անում (ինքնագլուխ, թէ իշխանութեան հրամանով—այդ էլ Աստուած գիտէ) և զէնքերն անխիղճ կերպով կոտրատում ու ոչնչացնում։ Մի կողմից զինաթափ է անում ալ. սպան հայերին, միւս կողմից վտանգի ենթարկուած հայերին օգնութիւն չի հասցնում. ինչո՞վ կարելի է բացատրել այս հակասութիւնը։ Անբաղդ ծերունին, պատմելով իւր գլխին եկած դժբաղդութիւնը, ողբալով արտասուք էր թափում և հեկեկալով յայտնում, թէ ինչպէս է նա սպասել իւր անբաղդ երեխաներին Բաղաքէնդ գիւղում պատահած աղէտի միջոցին և ուզում էր նրանց տեղափոխել աւելի ապահով տեղ, Գանձակ, ու զրկուեց իւր սիրելի զաւակներից...։ Այժմս յայտնուեց, որ թշուառ ծերունու ամենայն երեխաներն սպանուած ու մի ձորի մէջ ընկած են...

Ամսիս 19-ին, երեկոյեան ժամը 4-ին մօտաւորապէս, քաղաքումս, Զայլու կոչուող փողոցի ներքև, դարձեալ սկսուեց հրացանաձգութիւնը. թուրքերը զինուած, ձիաներով ու ոտով ուզում էին մտնել քաղաք, բայց սալոր զօրքերը հրացաններ պարպելով նրանց ցրեցին։ Հրացանաձգութեան միջոցին երկաթուղու կայարանից հայերը մի քանի սայլերով մթերքներ են բերելիս լինում քաղաք զինուորական պահակի տակ. հէնց որ լսում են հրացանաձգութեան ձայնը, իսկոյն վերադառնում են նրանք կայարան։ Երեկոյեան ձայն ընկաւ, որ իբր թէ թուրքերը բռնել են սայլերը. իրարանցումն ընկաւ։ Բայց այդ լուրը սխալ դուրս եկաւ այս անգամ, և սայլերը հասան հայոց թաղն ուշ գիշեր ժամը 10—11-ին։

Ամսիս 20-ին թուրքերը նորից գերեցին երկու հայ տղաների. մէկը բաղարում, միւսը երկաթուղու կայարանում. վերջինս մի կերպ յաջողեցնում է փախչել ու ՝ազատուել թուրքերից, իսկ միւսի մասին մինչև այժմս տեղեկութիւն չկայ։

Ամսիս 21-ին նկատելի կերպով բազմաթիւ զինուած թուրքեր ձիով անցել են Զայլուի տակից. ուր և ինչ նպատակով էին դրանք գնում—յայտնի չէ։

Ահա մեր—գանձակեցիներիս դրութիւնը. ինչ կըլինի այսուհետև, և ե՞րբ ենք ազատուելու մենք թուրքի անպատիժ արարքից—Աստուած է իմանում։

Մեր ժամանակաւոր ընդհանուր նահանգապետ գեներալ Ֆլէյշերը իւր խնդրքի համաձայն արձակուեց այս պաշտօնից. հայերը սրտանց ցաւում են նրա արձակուելու մասին։ Նոր ժամանակաւոր ընդհանուր-նահանգապետ Ալֆաանը եկել է արդէն Գանձակ։ Ցանկանք, որ սրա օրօք գտնէ հանգստութիւն գտնէ մեր քաղաքի և նահանգի խեղճ ու թշուառ հայ ժողովուրդը։

Նուաճեցի

ՔՐՈՆԻԿՈՆ

ԹԻՖԼԻՍ

Որովհետև ս. Սարգսի վանքի ճանապարհն ընկած է թուրքերի քաղաքամասով, որտեղով անցուդարձն ապահով չէ ներկայումս, այդ պատճառով թեմիս սրբազան առաջնորդի կարգադրութեամբ ս. Սարգսի մասունքը յիշեալ եկեղեցուց փոխադրուած է վանքի առաջ եկեղեցին, ուր և կըկատարուի տօնական հանդէսը ս. Սարգսի տօնին։

—Թեմիս սրբ. առաջնորդը յուն.-ին ժամը 1-ին, այցելեց Հալաբարի ճաշարանը, որտեղ պատսպարուած են Կոզէն գիւղացի գաղթականները։ Սրբ. առաջնորդը ցաւալի դրութեան մէջ գտաւ գաղթականներին. նրանց երեխաները կարմրուկով բռնուած, զանազան հիւանդութիւններով վարակուած և խոնաւ գետնի վրայ թափթփուած էին։

—Թիֆլիսի ոստիկանութիւնը տընատէրերին պարտաւորեցնում է ստորագրութիւն առնել իրենց կենւորներից, որ սրանք զէնք չեն պահում իրենց բնակարաններում, և այդ ստորագրութիւնները ներկայացնել ոստիկանութեանը։

— Յունուարի 25-ին Թիֆլիսում արտիլերիստները տօնեցին Նորին Բարձրութիւն Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեւիչի ընդհանուր-ֆելդցեյխմայստերութեան 25-ամեակը։ Այդ առթիւ զինուորական տաճարում կատարուած մաղթանքի ժամանակ Արսենալի լեռան վրայ 21 անգամ թնդանօթ արձակուեց։ Մաղթանքին ներկայ էին փոխարքան, գեներալիտետը և այլն։

—Յունուարի 27-ին տեղի ունեցաւ հանգուցեալ գեն. Գրեազնովի թաղումն Ալէքսանդր Նևսկու տաճարի բակում։ Թաղմանը ներկայ էին փոխարքան, նրա օգնականները, գեներալիտետը և այլն։ Զինուորական վերջին պատիւը տալու համար կանգնեցրած էր իւնկերների դպրոցի մի բատալիոն երաժշտական խմբով ու դրօշակով և ժանդարմների մի էսկադրոն առանց ձիերի։ Դագաղը գերեզմանն իջեցնելիս 3 անգամ թնդանօթնելի զալպ տրուեց Արսենալի լեռան վրայ։

— Թիֆլիսի և գաւառի ընդհանուր-նահանգապետը յայտարարում է, որ զէնք կրելու և պահելու համար խնդրագրերի ընդունելութիւնը, թոյլատրական վկայականներ տալը և հին վկայականների վրայ կնիք դնելը դադարեցրած է. նրանք, որոնք զէնք ունին, հրաւիրւում են անյապաղ յանձնել այդ զէնքը զօրանոցներին կամ կոմենդանտի վարչութեանը։

— Կովկասի փոխարքայի խորհրդին կից կազմուած մի առանձին յանձնաժողով այս օրերս պիտի սկսի իւր աշխատանքները Կովկասի պետական գիւղացիների վիճակը կազմակերպելու վերաբերմամբ։

— Կովկասի պարսից ընդհանուր հիւպատոսի պաշտօնակատար գեն. Արնուլ-խան Ֆերդ-ուս-Սուլթանն իւր կառավարութեան կարգադրութեամբ Թիֆլիսից մեկնում է Բագու, Բաթում, Երևան, Գանձակ, Վլադիկաւկազ և Կարս տեղական հիւպատոսարանների առանձին կարևոր գործերի համար։

— Թիֆլիսի Միքայէլեան երկաթուղային տեխնիքական դպրոցի աշակերտները գործադուլ էին արել իրենց 5 ընկերների արձակման պատճառով։ Դրանից յետոյ արձակուած էին դարձեալ 11 հոգի, բայց պարապմունքներն այնուամենայնիւ չէին սկսւում։ Այժմ Պետերբուրգից կարգադրուած է արձակել բոլոր ազգատար-աշակերտներին, իսկ եթէ այդ բանից յետոյ էլ աշակերտները շարունակեն չյաճախել դասերին, այն ժամանակ փակել դպրոցը։ Այս առթիւ դպրոցի վարչութիւնն աշակերտներին խորհրդակցութեան է հրաւիրել, որը պէտք է տեղի ունենայ այսօր շաբաթ։

— Հաշուապահական կուրսերի հիմնադիր պ. Ն. Աբրահամեան փոխարքայից թոյլտուութիւն է խնդրում Թիֆլիսում բանալու հայկական տղայոց գիմնազիոն, ուր բոլոր առարկաները պիտի աւանդուեն հայերէն լեզուով, բացի ռուսաց լեզուից, պատմութիւնից և աշխարհագրութիւնից։

— Այս օրերս քաղաքիս օսմանեան հիւպատոսարանի, Պետերբուրգի թուրքական դեսպանատան և Բ. Դրան միջև երկար ու ձիգ հեռագրների (շիֆրով) փոխանակութիւն տեղի ունեցաւ։

— Ընդհանուր նահանգապետի հրամանով մի ամսուայ բանտարկութեան են ենթարկուած Թիֆլիսի նկարչական դպրոցի 6 աշակերտ այն բանի համար, որ նրանք բանի միջոցներով աշխատում են եղել դադարեցնել տալ պարապմունքները դըպրոցում։

— 7-րդ քաղաքամասի պրիստաւի ձեռքով բռնուած է ոմն Դմիտրի Բաքրաձէ, որը Հաւլաբարի մէյդանում վաճառականներին տոկում էր գործադուլ անել։ Ընդհանուր նահանգապետի հրամանով Բաքրաձէն բանտարկուած է երեք ամիս ժամանակով։

— Մուխրանեան պարտէզ վերջերս չէր գործում, որովհետև նաւերը փըտել էին և կարող էին ջրասոյզ լինել։ Ներկայումս հնի տեղ նոր պարոմ է շինուած և սկսել է գործել յունուարի 25-ից։

— Ամեն տարի պահեստի զինուորները, ինչպէս յայտնի է, կանչւում էին զինուորական մարզանքի չորս շաբաթ ժամանակով։ Թիֆլիսի նահանգապետը յայտարարում է ի գիտութիւն ընդհանրութեան, որ բարձրագոյն հրամանով սոյն 1906 թուականին չի լինելու այդ զինուորահաւաքը։

— Կարգադրուած է, որ անդրկով-

կասեան երկաթուղիներով փոխադրուող պատրաստ այն հակները, որոնց մէջ կասկածւում է թէ զէնք և ռազմամթերք կայ, պէտք է բանալ այն կայարաններում, ուր ուղարկւում են նրանք, և ամէն մի[...] պիտի անել իմանալու [...]ար, թէ [...] հա[...]ով է ստացողը։

— Ընդհանուր-նահանգապետի դիւանատանը մինչև յունուարի 25-ը կնիք է խփուած զէնք պահելու համար տրուած 2082 վկայականի։

— Թիֆլիսում այս օրերս ձերբակալուած է «Իվերիա» լրագրի աշխատակից Վ. Դարչիաշվիլի։

— Յուն. 26-ին երեկոյեան ժամը 8-ն անց—արքունական թատրոնի մօտ, թատրոնական փողոցի վրայ գտնուող «Հիվաչիա» հասարակ հիւրանոցի բուֆետում արագ խմելու միջոցին Մուրադով օկոլոդոչնիկ մի քանի գնդակի հարուածով վիրաւորւում և մեռնում է։ Այդ միջոցին բուֆետի ռեստորանում բաւականին մարդիկ են եղել։ Փողոցում կազակները փախչողների կամ կասկածաւորների հետամուտ լինելով չորս հոգու կալանաւորեցին և տարան յանձնեցին կոմենդանտի շինութիւնը։

— Յունուարի 26-ին ս. Սարգսի մասունքը Վանքի աւագ եկեղեցին բերուեց 27-ին, իսկ երեկոյեան ժամերգութեան նախատօնակ կատարուեց. Թիֆլիսի հայերն և վրացիները երկսեռ բազմութեամբ լցրին վանքը և բակը։ Ս. մասունքի ուխտը տևեց մինչև ժամը 12-ը։

— Ա. Ի. Քալանթարեան փոխարքայից թոյլտուութիւն է խնդրում Թիֆլիսում հրատարակելու ռուսերէն ամենօրեայ մի թերթ «Кавказскій Курьеръ» անունով։

— Յուն. 25-ին, գիշերուայ ժամը 2¼-ին Վարանցովի արձանի հանդէպ գտնուող „Ամարիա" հիւրանոցը հրացանաձգութեան ենթարկուեց հետևեալ պատճառով։ Այդ հիւրանոցում երկու պարոններ վիճում են։ Վէճը սուր կերպարանք ստանալով, մէկի ձեռքին գտնուող ձեռնափայտը կպնում է լուսամուտին և այնպիսի ձայն է հանում, որ Վարանցովի արձանի մօտ կանգնած սալդատները կարծում է, թէ ատրճանակ են արձակւում, սկսում է հրացան արձակել դէպի հիւրանոցը. Զինուորները համնում են և 26 անգամ հրացան են արձակում դէպի այդ հիւրանոցը և ապա ներս մտնում խուզարկում են։ Խուզարկութեան ժամանակ հասնում են 30 կազակներ, կամենում են հրացան արձակել դէպի այդ տունը։ Բարեբաղդաբար այդտեղ հիւրանոցում գտնուող մի ռուս սպայ դուրս է գալիս և համոզում կազակներին, որ այդտեղից հրացան չէ արձակուած. Դրանից յետոյ կազակները թողնում են հրացանաձգութիւն անելը։ Այդ շինութիւնը Նիկ. Միրիմանեանցին է։

ԳԱՒԱՌ

— Քութայիսում վերջին օրերս յաճախացել են թալանն ու հրձիգութիւնները։ Գիշեր չի անցնում, որ հրդեհ չպատահի։ Այրում են գլխաւորապէս խանութները։ Վաճառականները, վախեցած այդ բանից, ապրանքները փոխադրում են իրենց բնակարանները կամ այլ հեռաւոր տեղեր։ Շատ խանութներ դատարկուած, փակուած են. բնակիչները փախչում են քաղաքից։

— Երևանից հեռագրում են, որ յունուարի 26-ին, գիշերուայ ժամը 12-ին, հրացան են պարպել նահանգապետի տան վրայ. երեք թուրք բռնուած են ոճրագործութեան տեղում, նրանից զէնքը խլուած է։

— Քութայիսում յունուարի 26-ին, օրուայ ժամը 2-ին մահացու կերպով վիրաւորուած է գաւառապետ Կեամուլը (Գեղամեան) քաղաքի կեդրոնում։ Մարդասպանն անյայտացաւ։ («Պետ. գործ.»)։

— Միջնորդութիւն է յարուցուած Բաթումում թրքական ընթերցարան բանալու 2 կոպ. մուտքով։ Իշխանութիւնը համակրանքով վերաբերուեց այդ միջնորդութիւնը։

— Քութայիսի գաւառի Բաղդադի ատանում յունուարի 10-ին հրձիգութիւնից այրուած է 37 խանութ։ Հարևան Դիմի գիւղում կրակ են տուել 8 տուն։

— Փոթում այս օրերս ձերբակալուած են գործադուլի բիւրօյի 15 անդամ, երկու աշխատաւոր և դարձեալ մի մարդ, որի վրայ կասկած կայ, թէ նա է սպանել մի նաւապետի, երկու ժանդարմի և մանուար հաւատարմատար Պլխոտնիկովին։

— Քութայիսում յունուարի 23-ին ատրճանակով սպանուած է ոստիկանական պրիստաւ Կոբալիանի։ Մօտերքը կանգնած պահակ զինուորները սկսում են հրացաններ պարպել փախչող մարդասպանի ետևից, որի ժամանակ սպանւում և վիրաւորւում են մի քանի ուրիշ մարդիկ։

— Ղարայազ է գնացել մի առանձին յանձնաժողով որոշելու համար այն վնասները, որ կրել են հայերը հայ-թաթարական ընդհարումների ժամանակ։ Յանձնաժողովի անդամներն են հաշտարար միջնորդ Բուրնաշով, արքունական հողերի վերակացու Կուպչինկօ, գաւառապետի օգնական Վաղնեսենսկի և այլն։ Հայերին հասցրած վնասի քանակը հաշւում են 600 հազար ր.։

— Նովոռոսիյսկից «Պետ. գործ.»-ը հեռագրում է յունուարի 25-ից, որ ժամանակաւոր ընդհանուր նահանգապետն ու պրոկուրորի օգնականը մեկնել են Սոչի, որտեղ մինչև այժմ յեղափոխականները դիմադրում են Պլաստունսկոյէ գիւղում։ Փոխադրանաւերով այնտեղ են ուղարկւում մի քանի հարիւրեակ պլաստուններ։

— Բաքւում ներքին գործերի մինիստրի կարգադրութեամբ «К. Слово»-ից յետոյ փակուած է նաև «Бак. Жизнь» լրագիրը «վնասակար ուղղութեան» համար։

— Անդրկովկասում իշ. Գոլիցինի պահանջմամբ ոստիկանական պահակ էր կազմակերպուել աւազակութեան առաջն առնելու համար, և այդ պահակի վրայ իւրաքանչիւր տարի 2500,000 ր. էր ծախսւում։ Սենատոր Կուզմինսկին իր տեղեկագրի մէջ ցոյց է տալիս այդ պահակի անբաւարար լինելը։ Ոչ միայն նա լաւ չէր առաջուայ ռեժիմային պահակից,—ասում է Կուզմինսկին,—այլ և փող դուրս քաշելու կողմից անցել էր նրանից։ Մօտ յարաբերութեան մէջ լինելով գիւղացիների հետ, նրանք կատարեալ խաղաղ էին տեղական բնակչութեան համար, որովհետև ամբողջապէս մի ծանր բեռ էին։ Բնակիչները տրտունջ և գանգատներ են յայտնում, որ ոստիկանական պահապաններն առանց կաշառքի ոչ մի քայլ չեն անում։ Ամէն մի ոճրագործութիւն, պաշտօնական անձի լրտեսութիւն, կարճ ժամանակով հարկերի յետաձգութիւն և այլն նրանց համար արդիւնք ստանալու աղբիւր էր։ Ի միջի այլոց կան նահանգական կառավարութեան օրագրական որոշումները, որոնց հիման վրայ պահակներից 10 հոգու դէմ դատ է յարուցուած այն պատճառով, որ նրանք փող են պահանջել դատապարտին յանձնելու կամ մի որ և է մեղադրանք բարձելու նպատակով և այլն։ («Сп. В.»)

ՌՈՒՍԻԱ

«Русь.» լրագիրը ճշգրիտ աղբիւրից հաղորդում է, թէ հիմնական օրէնքների մէջ անելիք փոփոխութիւնների նախագիծը, որի մասին տեղեկութիւն է տուել «Н. В.»-ն, թէև պատրաստւում է կառավարական ատյաններից մէկում, սակայն կառավարութեան նախագիծ չէ։ [...] («Н.»)

— Ֆրանսիական «Jour.»-ի Պետերբուրգի թղթակից Ալդանի ասելով, գրաֆ Վիտտէի դրութիւնը շատ վատ է։ Մի կողմից պահպանողականներն են նրան մեղադրում, որ նա հոկտեմբերի 17-ի մանիֆեստով յեղափոխութիւն առաջ բերեց Ռուսիայում, միւս կողմից՝ ազատամիտները, որ նա շատ ճնշող միջոցներ է դիմում և ազատութեան ամէն մի արտայայտութիւն խեղդում։ Երրորդ կողմից՝ անիշխանականներն են սպառնում սպանել նրան։ Ակամայ գր. Վիտտէն երկիրը կառավարում է առանց կատարեալ ազատութեան, և նրա քաղաքականութիւնը կախուած է Ցարսկոյէ Սելօյում անդադար փոփոխուող տրամադրութիւնից։ Զարմանալի չէ ուրեմն, որ գր. Վիտտէն ընդհանուր ֆրազներ է ասում։ Նա զրկուած է իր մտածածն ասելու հնարաւորութիւնից։ («Н.»).

— Ֆինանսների մինիստրութիւնը, կամենալով բարձրացնել ծխախոտի ակցիզը, խորհրդակցութիւններին մասնակցելու էր հրաւիրել ծխախոտի գործարանատէրերին։ Յուն. 17—18-ին այդ մասին խորհրդակցութիւններ են եղել, և գործարանատէրերն այն կարծիքն են յայտնել, թէ բարձր ակցիզն ոչ միայն չի աւելացնել գանձարանի եկամուտը, այլ, ընդհակառակը, կըպակասցնի, որովհետև աւելի ևս կըսկսեն մաքսանել ծխախոտի գործածութեան դէմ։ Եւ այժմ իսկ՝ տնտեսական ծանր պայմանների պատճառով, սկսել են քիչ ծխել։ Բացի դրանից բարձր տուրքը անկասկած կը փչացնէ ծխախոտի որակը, որ բնականաբար վատ կազդի ծխողների առողջութեան վրայ։ («Н.»)։

— Մօտ ապագայում կառավարիչ սենատի ընդհանուր ժողովում պիտի վճռուի սկզբունքի այն հարցը, թէ բանուորները գործադուլների համար որքան ռոճիկ ստանալու իրաւունք պիտի ունենան («Р. В.»)։

— Քաղաքական շրջաններում լուր է պտտում, թէ Տրեպովին շուտով մի անկախ բարձր պաշտօն են տալու։

— Մինիստր Դուրնովոն արդէն 10 օր է, որ չէ եղել Ցարսկոյէ Սելօյում։ «Н. В.»-ն ասում է, թէ մինիստրը յոգնել է և այնքան էլ առողջ չէ։

— Պետերբուրգի քաղաքապետը հրաման է արձակել ոստիկանութեան, թէ արգելւում է այս կամ այն քաղաքական կուսակցութիւնների բնորոշութեան մասին արած կոչերի ստորագրութիւնն և աֆիշների սիւներին կպցնելը («Н. В.»)։

— Մտադրութիւն կայ Պետերբուրգում մի շաբաթաթերթ հրատարակել ռուսերէն լեզուով մուսուլմանների համար։ Լրագրի նպատակն է Ռուսիայում գտնուող մուսուլմանների շահերը պաշտպանել։ («Р. В.»)։

— «Нов.»-ն արժանահաւատ աղբիւրից իմացել է, որ փետրուարի սկզբին մինիստրների խորհրդում պիտի քննեն Լեհաստանի արդի վիճակը։ Այդ խորհրդակցութիւններին ներկայ է լինելու Վարշաւի ընդ. նահանգապետ Սկալոնը։

— «Пет. Л.»-ը հաղորդում է Դեյչ սոցիալիստի փախուստի մանրամասնութիւնները։ Տեսնելով որ սաստիկ ձերբակալութիւններ են տեղի ունենում, Դեյչը պատրաստւում է արտասահման գնալու և Մէնշիկով անունով անցագիր ձեռք բերում։ Քաղաքապետի դիւանատանն անցագիր տալիս են Դեյչին, բայց ժանդարմները հետևում են նրան և իմանում, որ նա Նոր Թատրոնումն է։ Այդտեղ էլ նրան բռնում են։ Ոստիկանական դեպարտամենտում նրա ձերբակալութիւնը բացատրում են նրանով, որ ներումը նրան չի վերաբերում։ Նրա քաղաքական յանցանքը, որի պատճառով տաժանագիր աշխատանքի ենթարկուեց, ներուած է, իսկ 1902 թ. փախչելը չէր կարելի յարմարեցնել ներման։ Նրան պիտի դատէին քրէական դատարանում Սիբիրից փախչելու, Պետերբուրգում առանց գլխագրի բնակուելու և ուրիշի անունով անցագիր ստանալու փորձի համար։ 10 օր բանտարկուած լինելուց յետոյ, յուն. 16-ին նա փախչում է, և թւում դա երրորդ անգամն է։ Երբ նրան բերում են հարց ու փորձի, նա օգտւում է քաղում այն հանգամանքից, որ դանլիճում ինքը մենակ է մնում. Ջարդուած ապակու միջից ձեռք տանում է, դուռը բաց է անում և աննկատելի կերպով դուրս գնում։

— Մանջուրիայի զօրքի գլխաւոր հրամանատար Լինևիչը, ինչպէս լսել է «Р. В.»-ն, հիւանդութեան պատճառով հրաժարական է տուել։

— Նաւաստիների վերջին ապստամբութեան ժամանակ Կրոնշտադտից փախել էր հ. Իօհաննն Կրոնշտադտսկին, այդպիսի ճգնաժամին բախտի բերմունքին թողնելով իր հօտը, որ և սաստիկ վնասեց նրա ժողովրդականութեանը։ Առաջուայ պէս այլ ևս նրա անունով չեն ստացւում դրամական ծրարներ խուլ գաւառներից։ Այդ պատճառով էլ հ. Իօհաննը վարձատրութիւն չէ տալիս իր փառքը տարածողներին, որոնց մեծ մասը «բոսիակներն» էին։ Այժմ Կրոնշտադտից բազմաթիւ «բոսիակներ» են դուրս արուած, որի համար բնակիչները շատ ուրախ են։ («Род.»)։

— Պետերբուրգի քաղաքապետը հեռախօսով իմաց է տուել բոլոր ոստիկանական թաղերին, որ լաւ հսկողութիւն ունենան մուսուլմանական համաժողովի անդամների վրայ և միջոցներ ձեռք առնեն, որ ժողովը չըկայանայ։

— Պետերբուրգում միացել են հետևեալ «աջակողմեան» կուսակցութիւնները. «Հոկտեմբերի 17-ի միութիւնը» «Յառաջդիմական-տնտեսակ». կուս., «Համառուսական առևտրական արդիւնաբերական» միութիւնը, «Սահմանադրականների ժողովրդապետական» միութ., «Իրաւական կարգի» կուս. և «Խաղաղ նորոգման» կուսակցութիւնը։ Այսպէս միացել, ի մի են ձուլուել աջակողմեան կուսակցութիւնները, որոնց մէջ մեծ տարբերութիւն չկար։ Միացեալ աջակողմեանների առաջին քայլն այն է եղել, որ դիմել են ներքին գործոց մինիստրին վերացնելու պետական և ընդհանուր հարցերի համար ժողովներ կազմելու արգելքը։ («В»).

— Մաքսիմ Գորկին անգլիացի յայտնի սոցիալիստ Գինդմանին գրած նամակներից մէկում ահաւասիկ ինչ է ասում գր. Վիտտէի մասին. «Իմ կարծիքով, Ռուսիայի ներկայ անիշխանութեան պատճառը մեր կառավարութեան գլուխ՝ Թոյլ, տատանուող գր. Վիտտէն է, որին Եւրոպայի և Ամերիկայի բուրժուազիան մեծ պետական մարդ նկատեց։ Ես շատ բարձր կարծիք ունիմ արևմտեան բուրժուազիայի զարգացման և խելքի մասին, բայց հասկանալ չեմ կարողանում, թէ նա ինչպէս է կարող պետական իմաստութիւն տեսնել այն մարդու մէջ, որ կործանում է երկիրը և պատառ պատառ ծախում։ Մանաւանդ այս վերաբերում է նրա այն առաջարկութեան, որ ռուսաց երկաթուղիներն անցնեն օտարազգի դրամատէրերի ձեռք։ Հոկտեմբերի 17-ից գրաֆ Վիտտէն հաստատ աշխատում է ռուսաց յեղափոխութեան ամենաւերք անիշխանութեան բնաւորութիւն տալ։ Կառավարութեան բոլոր գործողութիւնները ժողովրդի իրաւանց ակներև խախտումն է. նա դիտմամբ աշխատում է դրդել ժողովուրդն ապստամբութեան և ժողովրդի ուժը ճնշել զինուորական ուժով։ Մեր յետադարձական մամուլը հանդիսաւոր կերպով բացականչում է. պրոլետարիատը ջարդուել է, յեղափոխութիւնն արմատախիլ եղել։ Սակայն այդպէս խօսելը տակաւին շատ վաղ է»։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Փարիզի «Pro Armenia»-ի յունուար 1-ի թիւէն ուրախութեամբ կիմանանք որ լոյս տեսած է Լոնդոնի մէջ հրատարակուելիք անգլիերէն լեզուով «Pro Armenia»-ի առաջին թիւը՝ խմբագրութեամբ հանրածանօթ Ա. Սէֆէդի։ Իբրև նշանաբան՝ թերթին ճակատը զետեղուած են Բերլինի 61-րդ և Կիպրոսի դաշնագրութեան առաջին յօդուածները։ Կը յուսանք թէ կարևոր դեր մը կատարելու կոչուած է այս նոր թերթը հայկական խնդրին նկատմամբ։

— Սեբաստէն կը գրեն թէ՝ ձմրան պատճառաւ կարօտ ընտանիքներու թիւն աւելցած է. բարերարներու կողմէ պահուող վարժարանները փակ են՝ նպաստի դադարման հետևանքով. աղքատ ապաքը հաց ճարելու համար փողոցները կը թափառին։ Նպաստից յանձնաժողովէն օգնութիւն կըսպասուի։

— Երուսաղէմի պատրիարքը հեռագրով կիմացնէ Ներսէս եպս. Գէորգեանի մահը, որ 60 տարուան միաբան էր եղած նոյն վանքին ու պաշտօնավարած Հնդկաստանի, Ռուսսութօյի մէջ։

— Բերլինէն մեզի կը գրեն թէ՝ խումբ մը ուսանողներ մտադիր են հայկական երեկոյթ մը տալ։ Երեկոյթը բացի իր բարոյական օգուտներէն՝ կը յուսացուի որ տայ նաև նիւթական կարևոր գումար մը։ Պիտի ներկայացուին հայկական կեանքէ տեսարաններ և ազգային պարեր տեղի պիտի ունենան։

— Կիմանանք որ Սլիվէնի մէջ երկրի կոտորածներու օգտին հանգանակութեան ձեռնարկուած է։

— Թ. Բազարջըքի Հ. Յ. Դաշնակցութեան խումբը հանգանակած է 97 ֆր. երկրի կոտորածներուն համար։

— Լիոնի Հ. Յ. Դ. կոմիտէն հանգանակած է երկրի կոտորածներու օգտին 800 ղր. (4500 ֆր.)

— Համբուրգի կոմիտէն՝ նոյն նպատակով՝ 339 ղր. (1600 ֆր.-ի մօտ)։ («Բազմիկ»)։

ՊԷՏՔ Է ՅԱՐԳԵԼ ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Բաւական ժամանակ էր Էջմիածնի Գէորգեան ճեմարանից պարբերաբար բարձրացող դժգոհութեան ձայները դադարել էին։ Այդ բաւական տևական հանգստութիւնն ենթադրել էր տալիս, թէ այստեղ ամէն բան կարգին է, թէ այդ հաստատութեան վարչութիւնը, հասկանալով այդ միակ հայ բարձրագոյն ուսումնարանական հիմնարկութեան էական նպատակը, նրան դրել է իր կոչման ու նշանակութեան համապատասխան պայմանների մէջ։ Սակայն, ինչպէս երևում է, տիրող ժամանակաւոր լռութիւնը դեռ չի նշանակելիս եղել, թէ ճեմարանի մէջ ամէն բան կարգին է։ Մեր ստացած տեղեկութիւններից երևում է, որ հին վէրքերը կրկին բացուել են, և աշակերտական խաղաղ կեանքը դուրս է ցատկել իր սովորական ընթացքից, շնորհիւ այդ հաստատութեան մէջ տիրող կարգերի ու կեանքի պայմանների, որոնք ժամանակի ընթացքում հետզհետէ աւելի ու աւելի խառնուելով ուսանող պատանեկութեան միտքը՝ նրան դրել են բողոքողի դերի մէջ։

Աշակերտական այդ խռովութիւնը ճեմարանի մօտ երեսուն տարուայ կեանքի մէջ ոչ առաջինն է և ոչ էլ, դժբաղդաբար, ինչպէս երևում է, վերջինը պէտք է լինի, հակառակ այն հանգամանքի, որ այսօր ճեմարանի ուսուցչական խմբի մի կարևոր մասը կազմում են այդ միևնոյն հաստատութեան նախկին սաները, և այդ՝ տարիներից ի վեր։ Այդ այդպէս լինելուց յետոյ, յուսալի էր, որ այդ հաստատութիւնը յառաջ վարող ուսուցչական կազմը, խիստ լաւ ծանօթ լինելով ճեմարանի անցեալին, աշակերտական հասակի պահանջներին և նրա ունենալիք նշանակութեան ամբողջ հայութեան համար, տարիների ընթացքում պէտք է կարող եղած լինէր այդ հիմնարկութեան տալ մի այնպիսի վիճակ, կեանք, մթնոլորտ, որ նա, չհակասելով հանդերձ նրա հիմնական նպատակին, տանելի լինէր աշակերտական բնախնդիր ու բազմապահանջ հասակի համար և բաւարարէր՝ մեր արդի հասարակական պահանջների տեսակէտից։

Մենք հեռու ենք աշակերտական այդ նոր դժգոհութիւնների ամբողջ յանցանքը ճեմարանի վարչութեան վրայ ծանրացնելուց։ Դժգոհութեան տեղիք տուող պատճառների մէջ կան կէտեր, որոնք արդիւնք են ուսանողական անփորձ ու պահանջկոտ հասակի, կան էլ կէտեր, որոնք ուղղակի բղխում են գիշերօթիկ ուսումնարանների կարգից և յատուկ են բոլոր նման հաստատութիւններին։ Դուրս ձգելով ճեմարանի բարձր դասարանների սաների այսօրերս առաջ բերած մի շարք պահանջներից դժուարաբարձելի համարուող այդպիսի կէտերը, միւս կողմը դեռ ևս մնում են բաւական կարևոր պահանջներ, որոնք մինչև այժմ պէտք էր որ նախատեսուած լինէին ու վերացուած առ միշտ, որպէս ժամանակի ոգուն, ուսուցման գործին, մեր հանրային կեանքի համար պատրաստուող այդ մատաղ սերնդի հոգեկան ու մտաւոր աշխարհին վնասակար եղող տարրեր։

Ահա ճեմարանական ներքին կեանքի այդ խոշոր դանդաղութիւնների ու թերութիւնների մասին է մեր խօսքը, պակասութիւններ, որոնց բարձումը համարեա անմիջականապէս կախուած է վարչական կազմի հաստատակամութիւնից ու ձեռներէցութիւնից։

Ժամանակն անդադար փոխում է մեզ շրջապատող կեանքը։ Իւրաքանչիւր օր իւր հետ բերում է մի նոր պահանջ, մի նոր ցաւ, և ճեմարանի նման մի բարձրագոյն հաստատութիւն, անընդունակ լինելով ժամանակի հետ ընթանալու, նորանոր պատուաստների ենթարկուելու,—բնականաբար, կորցնում է իր կենսունակութիւնը և օգտակար դառնալու էական հանգամանքը։

Հասկանալի է, որ սրանից նոյն իսկ մի տարի առաջ տիրող պետական կարգերն ու օրէնքները թէ Էջմիածնի ծայրագոյն իշխանութեան և թէ ճեմարանի վարչական մարմնին հարկադրում էին ճեմարանը ներկայացնել զուտ կրօնական տարրի տակ։

Ընդունում ենք այդ։

Սակայն, վերջին մի տարուայ ընթացքում մեզ շրջապատող մթնոլորտի մէջ շատ բան փոխուել է, շատ հայեացքներ, առ միշտ գերեզման մտնելով, տեղի են տուել առաւել թարմ առաւել ազատ հոսանքի։ Խիստ կարևոր է այդ հանգամանքը ճեմարանի ուղղութեան, ծրագրական փոփոխութիւնների և այլ տեսակէտներից, և մենք չենք ուզում մի բոպէ անգամ տարակուսած լինել, որ Գէորգեան ճեմարանի վարչական կազմը կունենայ հարկաւոր եղած բարեմտութիւնն ու իմաստութիւնը՝ տալու այդ հաստատութեան շատ աւելի ընդարձակ ու բազմակողմանի նշանակութիւն ու ծրագրային կազմ, որոնցից մինչև այժմ նա զուրկ է եղել գլխաւորաբար ճնշող պայմանների ներկայութեան պատճառով։

Չենք ուզում տարակուսած լինել նմանապէս և այն մասին, որ ճեմարանի վարչութիւնը նրա ներքին խաղաղութիւնը յուզող վերջին աշակերտական այդ դժգոհութեան վրայ չի նայիլ այն ուսուցչական սրտմտութեամբ, որն անցեալի նման դէպքերում ցոյց են տուել այդ հաստատութեան գլուխը կանգնած ղեկավարները։ Վարչական տարրական խոհեմութիւնը պահանջում է, որ, խստագոյն միջոցներին դիմելուց առաջ, բազմակողմանի կերպով քննուի ճեմարանի մարմնի վրայ բացուած այդ նոր վէրքը, հիւանդութեան սնունդ տուող պատճառներն երևան հանուեն, և ապա ձեռնարկուի նրա բուժման գործողութեան։ Անդամահատութեան գործողութիւնը, որ այնքան յաճախ է գործադրուել անցեալում, հաւասարապէս աղէտաբեր է եղել թէ հաստատութեան և թէ դուրս շպրտուած պատանիների համար։

Իրաւացի պահանջների լրացումը, վնասակար պայմանների անմիջապէս վերացնելու անկեղծ ցանկութիւնը և, վերջապէս, վարչութեան ներողամիտ վերաբերմունքը դէպի աշակերտական հասարակի ներշնչած անխուսափելի սխալանքները կարող են առաջ եկած անբաւականութիւնները դիւրութեամբ վերացնել և փորձանքն անցնել առանց զոհաբերութիւնների։

Չպէտք է անուշադիր թողնել, որ ճեմարանը կարօտ է հիմնական փոփոխութեան, և որքան շուտ ձեռնարկուի դրան, այնքան հիմնաւորապէս առնուած կը լինի այդ հայոց համար՝ բարձրագոյն հաստատութեան մարմինը շարունակաբար մաշող վնասակար միազմներից առաջը։

Լազ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻ՞ՒՆ ԹԷ՞ ԻՆՔՆԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Դեռ ևս անցեալ տարի հոկտեմբերամսին, երբ հրատարակուեց նշանաւոր պատմական մանիֆեստը, շատերն ուշադրութիւն դարձրին այն բանի վրայ, որ Թագաւորի տիտղոսում յիշուած էր «Ինքնակալ» խօսքը։ Այն ժամանակ այդ բացատրում էին նրանով, որ Թագաւորը հրովարտակն ստորագրելու վայրկեանին դեռ ևս ինքնակալ էր, բայց հետևեալ մանիֆեստներում էլ նոյնը կրկնուեց։

«Նոր-Դար»-ի №13 ում մենք բերինք այն տեղեկութիւնները, որ պետական գործերին տեղեակ «Н. В.» լրագիրը տալիս է հիմնական օրէնքների մէջ անելիք փոփոխութիւնների նախագծի մասին։ Յիշեալ լրագրի հաղորդած հակիրճ տեղեկութիւններից երևում է, որ վերևում կամենում են հաշտեցնել ինքնակալութիւնը սահմանադրութեան հետ։ Նրանք ուզում են անել այն, ինչ որ անկարելի է, որովհետև մէկը հակասում է միւսին, մէկը ոչնչացնում է միւսին։ Ինչտեղ կայ «ինքնակալութիւն», այնտեղ սահմանադրութիւն լինել չէ կարող, և, ընդհակառակը, ինչտեղ սահմանադրութիւն կայ այնտեղ ինքնակալութիւնը գոյութիւն ունենալ չէ կարող։

Այս նոր նախագծի վրայ ուշադրութիւն է դարձնում Մոսկուայում հրատարակուող «Վէկ» լրագիրը և ցոյց տալիս այն հակասութիւնները, որ կան հոկտեմբերի 17-ի մանիֆեստի և նոր նախագծի մէջ, եթէ միայն «Н. В.»-ի հաղորդած տեղեկութիւնները ճիշտ են։

«Н. В.» գրում է, թէ Օրէնքների Կաճառի առաջին յօդուածը փոխուելու է, իսկ այդ յօդուածը պարզ ասում է. «Համայն Ռուսիայի Կայսրն ինքնակալ և անսահման միապետ է»։ Դեռ ևս Պետրոս առաջինն ասել է. «Նորին Մեծութիւնը մի ինքնիշխան միապետ է, որ աշխարհումս ոչ ոքի պարտական չէ պատասխան տալու, և, որպէս քրիստոնեայ թագաւոր, զօրութիւն և իշխանութիւն ունի իր երկիրը կառավարելու ըստ իւր կամաց և բարեհայեցողութեան„։ Եւ միևնոյն ժամանակ մենք իմանում ենք «Н. В.»-ից, որ նոր նախագիծն ոչ մի փոփոխութիւն չէ անելու թագաւորի տիտղոսի մէջ, հետևաբար „ինքնակալ„ խօսքը մնալու է և բացատրուելու է այսուհետև միայն միջազգային անկախութեան իմաստով։

Այս բոլորից յետոյ ակամայ հարց է առաջ գալիս, թէ ինչ բան է հոկտեմբերի 17-ի մանիֆեստը։ Այդ մանիֆեստի մի կէտը, ուր ասուած է, թէ առանց Պետական Դումայի հաւանութեան ոչ մի օրէնք ոյժ չպիտի ստանայ,—զուտ սահմանադրական կէտ է։ Այդ այդպէս լինելուց յետոյ՝ ինչպէ՞ս բացատրենք, որ նոր նախագիծն անպատճառ կամենում է պահպանած լինել «ինքնակալ» խօսքը։ Ակներև է, որ նոր նախագիծը նպատակ ունի հոկտեմբերի 17-ի մանիֆեստին այլ բացատրութիւն տալ։

Նոր նախագիծը կամենում է „ինքնակալ" խօսքը բացատրել միջազգային անկախութեան իմաստով։ Սակայն սահմանադրական երկրներում, ինչպէս Անգլիան է, պետական գերագոյն իշխանութիւնը բաղկացած է երկու տարրերից՝ թագաւորից և պարլամենտից կամ, ուրիշ խօսքով, ժողովրդի ներկայացուցիչների հաւանութիւնից, և մինչև անգամ, եթէ խորը քննելու լինենք, այդ իշխանութիւնը պատկանում է միայն ժողովրդին, և թագաւորը միջազգային յարաբերութիւններում որպէս սոսկ ներկայացուցիչ է հանդիսանում ժողովրդի այդ գերիշխանութեան, և նրա, ժողովրդի, կամքն է կատարում, իսկ այդ փաստից բնաւ չէ կարելի եզրակացնել, որ գերիշխանութիւնը թագաւորին է պատկանում։

«Հոկտեմբերի 17-ի մանիֆեստով,—ասում է «Վէկ» լրագիրը,—սահմանափակուել է արդէն թագաւորի իշխանութիւնը, իսկ նախագծի հետ հրատարակելու նոր մանիֆեստը սահմանափակուել է մեր հասկացողութիւնը նոր ինքնակալութեան մասին Ռուսիայում»։

Նա ուշադրութիւն է դարձնում և այն հանգամանքի վրայ, որ թագաւորը սահմանադրութեան հաւատարիմ մնալու երդումը չէ տալու, այլ սահմանադրութիւնն է նրան երդուելու. այդ հանգամանքը շատ նշանակալից է, եթէ ի նկատ առնենք և այն, որ դէպի յետադարձութիւն ձգտող արդի կառավարութիւնը կամենում է, ինչպէս և լինի, պահել «ինքնակալ» խօսքը։

Մոսկուայի թերթը իւր նկատողութիւններն այդ առթիւ վերջացնում է ասելով, թէ Ռուսիան իւր այս ծանր վիճակից ո՛չ ինքնակալութիւնը և ո՛չ էլ սահմանափակուած ինքնակալութիւնը կըհանի, այլ սահմանադրական ազատութեան «անխախտելի հիմունքների» հաստատութիւնը, և այդ մեծ գործը պիտի կատարեն ժողովրդի ներկայացուցիչները և ոչ թէ «ինքնակալ» խօսքի մասին բացատրութիւն տուող մանիֆեստները։

Երևում է, որ Ռուսիայի բիւրոկրատիան ինքն է ուզում իւր «ինքնակալութիւնը» պահպանուած տեսնել և այդ պատճառով աւելի թագաւորական է, քան ինքը թագաւորը։

«ԶՔՈՅԴ Ի ՔՈՅՈՑ ՔԵԶ ՄԱՏՈՒՑԱՆԵՆ»

Չափազանցութիւն արած չենք լինիլ, եթէ ասենք, որ Ռուսիայի ներկայ տխուր օրերի, երկիրը հիմքից դղրդեցնող աւերիչ փոթորիկի յանցանքի պատասխանատուութեան մի շատ կարևոր մասը ծանրանում է ռուս մի շարք հրապարակախօսների, իրենց գրչերի արժէքը կշռելու անկարող ռուս «պատրիոտների» վրայ, որոնց մէջ այնքան «պատուաւոր» տեղ ունեն գրաւած «լուսահոգի» Վելիչկօն, Սուվորինն իւր «Нов. Врем.»-ի ամբողջ կազմով, «Москов. Вѣд.»-ներ, tutti quanti. Ռուսիայում օտարակերութեան հիմքը շատ վաղուց է դրուած և «պատրիոտների» այդ «լուսաւոր»

տաղերն ընդարձակ գործունէութիւն ունեն իրենց նաևում։

Կարծւում էր, թէ վերջին երկու տարուայ ազատագրական շարժումը, նրա տարած խոշոր յաղթանակների հետևանքով ռուս կառավարութեան աւանդական քաղաքականութեան մէջ կատարուած ակներև փոփոխութիւնը, դէպի ռուսական պայխանի տակ ապրող բազմաթիւ օտարազգիները, կարող եղած կլինին այդ «ջերմեռանդ պատրիոտների» լեզուն փոքր ինչ սանձահարելու, խիղախ արշաւը կասեցնելու։

Ա՛հ, որպիսի յուսախաբութիւն։

Ժամանակը, երկիրը տակն ու վրայ անող անցքերը անցեալ ռեժիմի դիւանատան աւերակներն ոչ միայն անկարող են եղել այդ մարդկանց բանակի ռանդը մեղմացնելու, հապա, ընդհակառակը, նոր ոյժ ու կորով են արծարծել նրանց մէջ, գործունէութեան նոր հորիզոն բաց արել նրանց առաջ։

Երևի, ուրիշ կերպ էլ չէր կարող լինել, քանի որ իրենց «ճշմարիտ ռուս» անունը տուող այդ մարդիկ աշխարհն են եկել միմիայն չարիք ու ատելութիւն սերմանելու համար մարդկանց շարքերի մէջ, որից ամենից առաջ ու աւելի տուժում է իրենց «երկրպագած» հայրենիքը։

Այո, ռուս «պատրիոտների» ստաբակիր բանակը պարզ է, որ մազաչափ անգամ չէ շեղուել իր մարդատեաց քաղաքականութիւնից։ Կամենում էք փաստ—ահա նոյնակարծ «Нов.Вр.»-ի մի նոր համարը, և տեսէք, թէ ինչ է ասում այդ թերթի էջերում նրա թղթակիցներից մէկը։

«Իշխան Գալիցինի փոխուելուց յետոյ, Կովկասում հաստատուեց փոխարքայութիւն, նշանակուելով այդ պաշտօնին գրաֆ Վորոնցով-Դաշկովը։ Գրաֆի՝ Ալէքսանդր III Թագաւորին մօտ լինելու հանգամանքը ռուս մարդկանց յուսադրում էր լաւագոյն ապագայի։ Յուսախաբութիւնը խիստ շուտ վրայ հասաւ։ Պ. Վերմիշեանի ձեռներէցութեամբ Թիֆլիսի քաղ. խորհուրդը Պետերբուրգ ուղարկեց երեք բրաւասուի, որոնք իբր թէ պէտք է ներկայացնէին Թիֆլիսի երեք—ռուս հայ ու վրացի—ազգութիւնները։ Ամենքի համար էլ պարզ էր, որ այդ ձեռնարկը մի կեղծիք, խաբէութիւն էր։ Որովհետև Թիֆլիսի բոլոր տանտէրերն և ուրիշ ընտրողները հայեր են, շատ հասկանալի է, ուրեմն, որ քաղ. խորհրդի անդամ ամենքից առաջ ընտրւում էին հայերը, իսկ միւս ազգութիւններից միայն այն անձերը, որոնք ձեռնտու էին հայերին։ Հէնց այդ պատճառով Պետերբուրգ ուղարկուած բրաւասու վրացուն Թիֆլիսի նրա ազգակիցներն երբեք էլ իրենց ներկայացուցիչը չէին համարում։ Իսկ ինչ վերաբերում է ռուս բրաւասուին, Թիֆլիսի ռուս ժողովրդի բաւական կարևոր մասը նրա վերաբերմամբ գաղափար անգամ չունէր, մինչև իսկ տեղեկութիւն չունէր նրա գոյութեան մասին։ Դա ինչ-որ համեստ, սակաւախօս, զառամեալ և միանգամայն անգոյն պաշտօնաթող գեներալ էր, որն բրաւասու էր ընտրուել սոսկ իր անգունութեան և ունեցած աստիճանի պատճառով։

«Պատգամաւորութիւնն իր հետ վերցրած ունէր մի շարք բարեփոխումների (реформы) ծրագիր, որոնք Կովկասն սպասում է փոխարքայից։ Ծրագրի էութիւնը կարճօրէն կարելի է ամփոփել այսպէս։ Կովկասը ոչ ռուսների, այլ տեղացիների, գլխաւորաբար հայերի համար։ Չգիտեմ, այդ պատգամաւորութիւնն եղե՞լ է փոխարքայի մօտ թէ ոչ, միայն այնքանը պարզ է, որ նոր իշխանութեան առաջին քայլերը շատ համապատասխան էին գալիս այդ ծրագրի հետ։ Գրաֆ Վորոնցով-Դաշկովը մի անգամից բեկանեց այն ամենը, ինչ որ մինչեւ այդ արուած էր, ինչ որ այնքան մեծ դժուարութեամբ կառուցուած էր իշխան Գոլիցինի ձեռքով։ Հայոց եկեղեցական կալուածները նորից անցան կաթողիկոսի ձեռքը։

«Փոխարքան քաղաքացիական մասի իրեն օգնական ընտրեց պ. Սուլթան-Կրըմ-Գիրէյին, որը ռուս հասարակութեան առաջ ոչ մի ժողովրդականութիւն չունի և է անդամ փոխարքայի խորհրդի։ Հայերը, զգալով իրենց ոյժը, սկսեցին նոյն իսկ փոխարքայի հետ խօսել մի այնպիսի լեզուով, որով ոչ մի ժամանակ ոչ ոք Կովկասում դեռ չէր համարձակուել խօսել ոչ թէ Թագաւորի տեղակալի, հապա նոյն իսկ որևիցէ գաւառապետի հետ։

«Ի պատասխան պատգամաւորների ցոյց տուած անկեղծութեան, փոխարքան յայտնեց իր շնորհակալութիւնը. «Իմ դուռս միշտ բաց է ձեզ համար»։ Ցաւ ի սիրտ պէտք է ասել, որ այդ միևնոյն դուռը ոչ բոլորովին նոյն ուրախութեամբ էր բացւում ռուս ժողովրդի առաջ, և հէնց այդ պատճառով էլ մի քանի ռուսներ, որոնք չէին կարողացել հաճոյանալ նոր հոսանքին, շտապեցին հեռանալ Կովկասից։ Գնացողներից առաջինն եղաւ ջերմ ռուս հայրենասէր [illegible] Վոստորգովը։ Ապա, վրացի քահանաների խաւարար արարքից յետոյ, պարտաւորուեցին հեռանալ սեմինարիայի տեսուչն ու էքզարխ Ալէքսէյը։ Տաք-տաք խոստացուած էին այնպիսի բարեփոխումներ, որոնց իրականացումը միանգամայն անհնարին էր, ինչպէս, օրինակ, Երդուեալների դատարանի հաստատումը, որ նշանակում էր արդարադատութեան գործը յանձնել հայերի ձեռքը»։

Թղթակիցը, շարունակելով իր անպատկառ ստութիւնների շարքը, խօսում է Անդրկովկասեան [illegible] խռովութիւնների, ապստամբութիւնների, գործադուլների, քաղաքական սպանութիւնների, հայ - թրքական կոտորածների մասին, և այդ ամենը համարում է կովկասեան նոր «լիբերալ» քաղաքականութեան անխուսափելի հետևանքները։ Չի մոռանում բաժին հանելու նաև Քութայիսի նահանգի գլխուած ապստամբութեան, ուր իմերեթներն ու գուրիացիները արտաքսում են իրենց քահանաներին ու կալուածատէրերին, պաշտօնանկ անում պաշտօնատար անձերի, այրում գիւղական վարչութիւնները, բռնանում կալուածատէրերի հողերի վրայ, կոտորում ուրիշների անտառները և այլն։

«Երկաթուղու գծերի վրայ,—շարունակում է «Нов. Врем».-ի կովկասեան թղթակիցը,—վրացի ու հայ բանուորները խաղաղ ոգով, օրը ցերեկով, բազմութեան աչքի առաջ, կոտորում էին իրենց ռուս ընկերներին և մնում բոլորովին անպատիժ։ Արդարութիւնը, սակայն, պահանջում է ասել, որ անբաղդ ռուս բանուորների հեկեկանքները, վերջապէս, ուշադրութեան առնուեցին փոխարքայի պալատում, և վերջիններս ինքնապաշտպանութեան համար ստացան ատրճանակներ։ Իսկոյն և թէ ռեակցիոն-հայկական մամուլը սկսում է սուգ ու շիւան բարձրացնել ու հրատարակել ամեն կողմը, թէ «կառավարութիւնը զինում է խուլիգաններին»։

Ինչպէս ընթերցող, հաւանում էք այդքան լրբենի ու ստորաքարշ ստութիւնները, որոնք, առանց խղճի փոքրիկ խայթ ունենալու, Թիֆլիսից ներարկւում են ռուս ամեն դասի, սեռի, հասակի մարդկանց ուղեղների մէջ։

Որքան թոյն ու մաղձ պէտք է պարունակելիս լինեն ռուս «ճշմարիտ պատրիոտի» այն տողերը, որ կառավարական օրգան «Кавказъ»-ի մինչև իսկ ամենատուր ջիղերը կարողացած լինեն վերիվայր ցնցել, այն «Кав».-ի, որի էջերից մի ժամանակ տարիներով նոյն թոյնը հոսել է ռուս մարդկանց երակները։ Հարցնում ենք մեր պաշտօնական օրգանի յարգոյ խմբագրութիւնից. եթէ միմիայն մի թղթակցութիւն, որի մէջ այնքան անպատկառ կերպով անուանարկւում ու բամբասւում է կովկասեան բարձրագոյն իշխանութիւնը, կարողանում է այդքան խիստ սրտմտեցնել «Кав».-ի խմբագրութիւնը, հապա ինչ կլինի կովկասի այն անբաղդ ազգութիւնների, մանաւանդ հայ հասարակութեան վիճակը, որոնք տարին տասներկու ամիս ենթակայ են եղել այդ անլուր լուտանքներին, ոճրալից ստախօսութիւններին ու բամբասանքներին, և դրանք տեղի անտեղի հեղեղուել են ոչ միայն օտարակեր «Нов. Вр.»-ի գաղիր էջերից, հապա հարիւրաւոր անդուռ բերաններից, և այն՝ տասնեակ տարիների ընթացքում։ Այո, «Кавказъ»-ը պէտք է, վերջապէս, համոզուի, որ մեզ հայերիս համար չափազանց անտանելի, սպանիչ ու կործանարար է ռուս մարդուց տարիներով անդադար ամբարիշտ ստախօսութիւններ լսել... Այդ նենգամիտ ու խարդախ քաղաքականութիւնն է, որը կտրել է կովկասցի հայի մէջքը և դեռ շարունակում է իր աւերիչ ընթացքը, չգիտենք մինչև ուր։

Թողնենք առ այժմ մեր ասելիքները և տեսնենք, թէ պաշտօնական «Кавказъ»-ն ինչպէս է պատասխանում Կովկասից փչուած այդ հրէշաւոր բամբասանքներին։

(շարունակութիւնը միւս անգամ)

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱԳՈՒԻ ԿԵԱՆՔԻՑ

ԲԱԳՈՒ 20 յունուարի.—Բագուի նահանգի Ղուբա գաւառում կայ միմիայն երկու հայաբնակ գիւղ—Բիլուար և Խաչմազ անունով։ Այդ գիւղերի հայ բնակիչները հայերէն խօսել չգիտեն, ոչ էլ հասկանում են. մինչև անգամ եկեղեցում իրենց գիւղում երբ քահանան քարոզ է խօսում, տիրացուն թուրքերէն թարգմանում է, որպէս զի հասկանալի լինի։

Բացի այդ, այդ գիւղերի հայերը արտաքինով շատ նման են թուրքերի—վզների յետին մասն ածիլած, մօրուքին, գլխին և բեխերին հինա են դնում (կարմիր ներկ և երեսն խօզելիս այնպէս են խուզում ինչպէս սիւննի աղանդին պատկանող մահմեդականները։ Հագուստի տարազն էլ կատարելապէս թրքական է։

Յուն. 14-ին Ղուբա գաւառի Քիլուար գիւղացի մի հայ երիտասարդ Բագուի երկաթուղով ճանապարհւում է դէպի Ղուբա (Խաչմազ կայարան). մինչև Բալաջարի կայարան հասնելը հայ երիտասարդին մօտ է գալիս մի բագուեցի թուրք, որը նոյն գնացքում իր երկու ընկերների հետ նստած է լինում։

— Ո՞ւր ես գնում,—հարցնում է բագուեցի թուրքը։

— Ղուբա։

— Շուտ կը վերադառնա՞ս.

— Չգիտեմ, — պատասխանում է քիլուարցին։

— Ամօթ չէ՞ քեզ նման ջահիլ տղին, որ այդպիսի ժամանակ Բագուից հեռանում է։ Ջումա օրը (ուրբաթ, թուրքաց կիրակի) մէջլիսում չե՞ս եղել։

— Ոչ։

— Ուրեմն ոչինչ չգիտես։

— Ոչինչ. ինչ կայ, որ։

— Շուտով ջահաթ (սրբազան պատերազմ) պիտի մղենք հայերի դէմ. այդ շան ծնունդներն իսլամին ուզում են ոչնչացնեն, պիտի դրանց սերմը կտրենք—ասում է բագուեցին շարունակելով։—Ահա ես իմ կանանց ու երեխայքն տանում եմ հեռու տեղ, մեր գիւղը, և շուտով պիտի վերադառնամ։

— Ես էլ, եթէ այդպէս է, շուտով կը վերադառնամ և կը մասնակցեմ «ջահաթ»-ին,—ասում է հայն աւելի մօտ նստելով թուրքին։

Այնուհետև երկար ու բարակ խօսում են, և հայերին թուրքը մեղադրում է, որ նրանք, այսինքն հայերը դրժուած մարդիկ են, բոլոր ինժեներները հայեր են բոլոր բժիշկները, երդուեալ հաւատարմատարները, պետական մարդիկ հայերից են, և նրանք չեն թողնում «որ մենք էլ յառաջադիմենք» և այլն։

Բագուեցի թուրքը բաժանւում է թուրքը կարծեցեալ հայից։

Փառոս

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

I

Յօգուտ Կովկասի հայ արկածեալց ստացել եմ Վեհափառ Կաթողիկոսի դիւանից 2000 ր. Պետերբուրգի եկեղեցական խորհրդից 2000 ր., Նոր-Նախիջեւանի փոխանորդ բարձ. Մուշեղ վարդապետի գրութեամբ 2375 ր. այսինքն (Չալթր գիւղի հասարակութիւնից 200 ր., նոյն հասարակութեան եկեղեցական գումարից 100 ր., Թոփտի գիւղի հասարակութիւնից 200 ր. Մեծ Սալա գիւղի հասարակութիւնից 500 ր. Նոյն հասարակութեան եկեղեցական գումարից 500 ր. Մասնաւոր նուիրաբերութիւնից 323 ր. 35 կ. Նախիջեւա գիւղի հասարակութիւնից 100 ր., նոյն հասարակութեան եկեղեցական գումարից 50 ր. մասնաւոր նուիրաբերութիւնից 107 ր. 20 կ., Կատարինէ աւանի հասարակութիւնից 200 ր. մասնաւոր նուիրաբերութիւնից 6 ր., Կամինսկայա ստանցիայում Հէքիմեան Կարապետ քահանայի ժողոված 59 ր., Գանձապետեան Մարտիրոս ա. քահանայի ժողոված 13 ր., Բեզելեան Պօղոս քահանայի ժողոված 10 ր., Մուշեղ վարդապետից 6 ր. 45 կ. և դրանց փոխադրութեան ծախք.)։

Թիֆլիսում Սարգիս Եղիազարեաննից 100 րուբլի. իշխանուհի Մ. Թումանեանցից, որ ժողովել է իր բարեկամների շրջանում, 50 ր. Յովհաննէս Բաղխեանից յիշատակ իր հանգ. Մարիամ ամուսնու 25 ր., և վանեցի Համբակ Եղաբեանից 3 ր. ընդամէնը 6553 ր...

Այս գումարն ամբողջապէս յանձնել եմ Վեհափառ Կաթողիկոսից հաստատուած յանձնաժողովի Պ. Գանձապահին։

Պ. Խմբագիր, խնդրեմ շնորհ արէք ի միամտութիւն պ. պ. նուիրատուների, տեղ շնորհել երկտողիս «Նոր-Դար» օրագրի մերձակայ համարներից մէկում։ Նուիրատուների մանրամասն ցուցակը իր ժամանակին կտպագրուի։ Առաջնորդ Հայոց Վրաստանի

Գարեգին Արքեպիսկոպոս

Թիֆլիս, 25 յունուարի։

II

Տէր Խմբագիր,

Ի նկատի ունենալով ներկայ անապահով դրութիւնը, Թեմիս բարձր Սրբազան առաջնորդը կարգադրեց ս. Սարգսի մասունքը այս օրուանից փոխադրել Վանաց աւագ եկեղեցին, ուր, ուրբաթ երեկոյեան ամսիս 27-ին կկատարուի հանդիսաւոր ժամերգութիւն և 28-ին շաբաթ տօնի օրը ս. պատարագ։ Ս. մասունքը [illegible] կլինի ուրբաթ երեկոյեանից մինչև երկուշաբթի։ Խնդրեմ, տօնի վերաբերութեամբ այս կարգադրութիւնը տպագրել բարեհաճէք ի գիտութիւն բարեպաշտ ժողովրդեան։

Վանահայր Ս. Սարգիս վանքի

Եփրեմ վարդապետ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ընդհանուր ընտրողական իրաւունքը Աւստրիայում.—Եւրոպական պետութիւններից շատերի քաղաքական ներքին կեանքի վերաբերուած խնդիրների շարքում առաջնակարգ տեղ է գրաւում կառավարական ձևի մէջ կատարուած մանր փոփոխութիւնը, որը պահանջ է ժամանակի ոգու, սոցիալական հոսանքի օր քան օրէ աւելի զօրանալու արդիւնաբերական խոշոր երկրներում։ Այդպիսի փոփոխութեան ջինը նկատւում է նաև Աւստրիայում, ուր աշխատւում է մտցնել ընդհանուր ընտրողական իրաւունքի սկզբունքը։ Խօսելով այդ մասին, «Journ. des débats»-ի Վիէննայի թղթակիցը հաղորդում է, որ նախագահ բարոն Հաուչը մինչև այժմ չի կարողացել Աւստրիայում ընդհանուր ընտրողական իրաւունք մտցնել։

Նախագահը զօրեղ հակառակութեան է հանդիպում խոշոր հողատէրերի ու առևտրական պալատի կողմից։ Առաջարկուած այդ ընտրողական բարեփոխումն ընդունուած դէպքում, առանձնաշնորհեալ դասերը—խոշոր կալուածատէրերն ու դրամատէրերը—զրկւում են իրենց առանձնաշնորհումներից, որն էլ պատճառ է հանդիսանում նրանց կողմից զօրեղ դիմադրութիւն առաջ բերելուն։

«Անցեալ շաբաթ, մինիստր-նախագահը հրաւիրում է վերին երեք պալատների քաղաքական կուսակցութիւնների պարագլուխներին, բացատրելու իր նախագծին ընդհանուր ընտրողական սկզբունքի վերաբերմամբ և այդ մասին նրանց կարծիքն իմանալու։ Առաջարկուած բարեփոխութեան ծրագիրն երեք կուսակցութեան կողմից ևս մերժւում է, և այն մի առժամանակ գոնէ պէտք է թաղուած համարել։

«Նախագահի ձեռք առած մի ուրիշ ճանապարհը նոյնպէս ունենում է տխուր վախճան։ Հաուչն ուզեց իր կաբինետին մասնակցելու հրաւիրել պարլամենտական երեք կուսակցութիւնների պարագլուխներին — գերմանացու, չեխի ու լեհացու—յուսալով որ նրանց օգնութեամբ ընտրողական բարեփոխութեան ծրագիրը կարող կլինի անցկացնել գոնէ պատգամաւորների պալատում։ Գործունէութեան այդ ասպարէզում ևս խորտակուեց, որովհետև չեխերի ներկայացուցիչ Պաչակը՝ ի փոխարինութիւն՝ այնպիսի պահանջներ արեց, որ մինիստր-նախագահի կողմից չէին կարող ընդունուել, որովհետև պահանջների լրացումը գերմանացիներին նրանից բոլորովին պէտք է հեռացնէր»։

Այսպիսով, Հաուչը իր ընտրողական ծրագիրը գլուխ բերելու գործում բացարձակապէս յանձնուած է իր սեպհական ոյժերին։ Դժուար է ասել, թէ որքան յաջողութիւն կունենայ։

—

Պատերազմի ձայներ.—Վերջին օրերս խիստ շատ է խօսւում թէ Ֆրանսիայում և թէ Գերմանիայում երկու ազգերի միջև ծագելիք պատերազմի հաւանականութեան մասին։

Ֆրանսական ‹Energie Francaise,, շաբաթաթերթի թղթակցի Էլզաս-Լոթարինգիայից գրած նամակով հաղորդւում է, թէ Ֆրանսիայի ու Գերմանիայի միջև բացուելիք պատերազմի մասին տարածուած լուրերը յամառ կերպով շարունակւում են գերմանական սահմանագլխի բնակչութեան մէջ։ «Բոլոր խօսակցութիւնները դառնում են միևնոյն նիւթի, միևնոյն հարցի, միևնոյն ցանկութեան շուրջը,—ասում է ֆրանսական թերթի նամակագիրը,—դա պատերազմն է։ Համարեա ամենքն էլ այնպէս են համոզուած երևում, որ խուսափել պատերազմից անկարելի է, մինչև անգամ նշանակւում է նրա ժամանակը, թէ երբ կարող է սկսուել, և առհասարակ հաւատացած են, որ դա մարտ ամսից աւելի հեռու չի անցնի։ Շատերը, զօրքի գալստեան սպասելով, սկսում են պաշարի պատրաստութիւններ տեսնել։ Էլզաս-Լոթարինգիայի գիւղը մասնաւորապէս աւելի է յուզում ֆրանսիացի ժողովրդի մտքերը։ Լրագրութիւնն ամեն կերպ աշխատում է պղտորուած մտքերը հանգստացնել, խաղաղութեան շարունակուելն ստեղծ ամեն մի աննշան դէպքը հրապարակութեան տալով և անդադար պնդելով, թէ երկու ազգերի միջև ծագած թիւրիմացութիւնները խաղաղ ճանապարհով կվերջանան։ Յամառ կերպով խօսւում է սահմանագլուխներում երկու կողմից ևս զօրքերի թւի աւելանալու մասին. պատմում են մինչև անգամ, որ Վիէնի ամրոցն իր ամբողջ թնդանօթաձգական ոյժը յետ է ստացել։ Ժողովրդին մասնաւորապէս յուզում են Ֆրանսիայից ստացուած լուրերը։ Պատերազմական լուրջ պատրաստութիւններ են տեսնում. Վերդենի, Տուլի ու Նանսի տեղական զօրքերի կայմը լրացուած և կռուի պատրաստ վիճակի մէջ է դրուած։ Զինւում են նմանապէս և սահմանագլուխների զօրքերը. միջոցներ են ձեռք առնում ամսիս վերջերում 1906 թ. պահեստներին զէնքի տակ առնելու»։

Ահա այն բոլոր ձեռնարկութիւնները, որոնց լուրերը [illegible] ահ ու սարսափի մէջ են դնում երկու դրացի ժողովուրդներին։

—

Մամուլի ազատութիւնը Պարսկաստանում.—Պարսկական «Շահընշահի» լրագրի ասելով, պալատական յետադարձ կուսակցութեան պահանջին, որ շահը սահմանափակէ մամուլի ազատութիւնը, նա պատասխանել է, թէ իր կարծիքով ամեն մի երկրի յառաջդիմութիւնը կախուած է նրա լուսաւորութեան աստիճանից. մինչդեռ մամուլը պահպանում է ձգտումն դէպի լուսաւորութիւն։ Ուստի նա, ընդհակառակը, ուրախ կը լինի, եթէ ժողովուրդն էլ այնպէս մտածի, ինչպէս նրա պետն է մտածում, որ ոչ մի խոչընդոտ չէ դնում իր ժողովրդի առաջ։

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԵՌԱԳՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

25 յունուարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Ռուսական ու չինական ներկայացուցիչները խորհրդածութիւն են անում ռուս-չինական դաշնագրի նախագիծը։ Ասւում է, թէ ռուսական առաջարկութիւններից մէկն է Մանջուրիայի բացումը բոլոր ազգերի առաջ և առաջարկել նրանց միևնոյն իրաւունքներն ու առանձնաշնորհումները։ Ռուսիան պահանջում է տալ իրեն Մոնղոլիայի հանքերի շահագործման իրաւունքը և առևտրական արտօնութիւններ չինական Թուրքաստանում այն դէպքում, երբ Չինաստանն արտաքին առևտրի առաջ բանայ ուղի Կալգան Ուրգային։ Մնացած պահանջները կազմում են այն միևնոյն առևտրական իրաւունքների շնորհումը մանջուրական երեք նահանգներում, ինչ որ առաջարկուած է Ճապոնիային։ Չինաստանը պնդում է ռուս կառավարութեան կողմից արուած խոստման իրագործման վրայ՝ վերաբերութեամբ ռուս երկաթուղային պահապան զօրքի հեռացման, որովհետև չին-ճապոնական դաշնագրի հիման Ճապոնիան ևս պարտաւորւում է յետ քաշելու իր երկաթուղային զօրքը, եթէ այդ կատարէ Ռուսիան։ Ռուսիան չի կամենում Չինաստանին զիջանել Եսլու գետի անտառների արդիւնաբերութեան իրաւունքները, առարկելով որ կնքուած դաշնագրի մի քանի պայմաններն իրենց մէջ արդէն պարունակում են այդ իրաւունքները։ Չինական շրջաններում երկիւղ են կրում, որ Ռուսիայի Մանջուրիայում ունենալիք յառաջխաղացական ընթացքը Մանջուրիայից կըթեքուի դէպի Մոնղոլիա ու չինական Թուրքաստան, ուստի մտածում է այդ տեղերում կեդրոնացած զինուորական կազմերն ուժեղացնել։ Միևնոյն այդ պատճառով առանձին պատիւների են արժանացած Պեկինին հարկ տուող մոնղոլական իշխանները։ Մոնղոլիա ուղարկուելիք դեսպանութեան գլուխ նշանակւում է չինական իշխան Սուն։ Դեսպանութիւնն իր հետ տանում է թանկագին ընծաներ։ («Ռեյտեր») Գործակալութեան ծանօթութիւն։ Մեր հաւաքած տեղեկութիւններն իրաւունք են տալիս մեզ «Ռեյտեր»-ի հաղորդած տեղեկութիւնների վրայ կասկածելու։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. — Բարձրագոյնս հաստատուած է մեդալ՝ կրծքի վրայ կրելու, ի յիշատակ երախտագիտութեան ճապոնական պատերազմում զօրքի ցոյց տուած անձնուէր քաջութեան և անբիծ հաւատարմութեան։

ՆԵԱՊՈԼ.—(Ստեֆանի) Վեզուվը շարունակում է իր արտավիժումը։ Հրաբուխի մերձակայ վայրերը վտանգից ազատ են։

ՓԱՐԻԶ.—Մինիստրների խորհուրդը, քննութեան առնելով եկեղեցական ստացուածքի ցուցակագրման ժամանակ տեղի ունեցած միջադէպը, վճռեց ցուցակագրումը շարունակել անընդհատ։ Փարիզում և գաւառներում դատական քննութեան են ենթարկւում զանազան եկեղեցիների քահանաներ, որոնք զրկուել են եկեղեցին պետութիւնից անջատող օրէնքներին և իշխանութիւններին դիմադրութիւն են ցոյց տալիս։

ՄՈՆՊԵԼԻԷ.— Ինժեներական զօրամասի զինուորները խորտակեցին տաճարի դուռը, ստացուածքի ցուցակագրումը կատարելու համար։ Դրսից ամբոխը կանչւտում էր և եկեղեցական երգեր երգում, որից յետոյ դիմում են դէպի քաղաք, ինքնավարութեան բնակարանը, ուր հրշէջների խումբը ցրում է նրանց։

ՍԷՆ-ԿԼՈԴ.— («Հաւաս») 2000-ից բաղկացած ամբոխը հակակղերական ցոյցեր արաւ և ապառական երգերով խորտակեց եպիսկոպոսի պալատի ու տաճարի պատուհաններն ու դռները։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Ծովային մինիստրը հրամանագիր է հրատարակել, որով ծովային իշխանութեան մէջ պաշտօն ունեցողներին, կամաւոր վարձուածներին, արհեստաւորներին արհեստաւորներին, ծովային հոգևորականութեան և զինուորներին արգելւում է քաղաքական նպատակներով կազմուած դաշնակցութիւններին, կազմակերպութիւններին ու կուսակցութիւններին անդամակցել և այդ կարգի ժողովներին գնալու, և ընտրելու իրաւունքից զրկուածները կարող են մասնակցել ընտրական խորհրդակցութիւններին, իրենց կարծիքները յայտնելով ընտրութեան արժանի անձերի մասին։ Թէ ծառայութեան մէջ և թէ պահեստում գտնուողները, մասնաւոր կրողները ենթարկւում են այդ կանոններին։ Պետերբուրգի իրաւաբանական յանձնաժողովի մէջ [illegible] փորձեր։ Յարուցուած միջնորդութեան համաձայն, արձակման վկայական ստանալու համար յանձնաժողովն առաջարկեց քննութիւն բանալ մինչև մայիսի 16-ը։ Խնդիրների ընդունելութիւնը դեռ ևս շարունակւում է։

ԼԻԲԱՒԱ.— Վայնեզինում զինուորական ատեանը 12 հոգու մահուան դատապարտեց. տասն արդէն հրացանի բռնուել, երկուսը փախել է։

ՎԱՐՇԱՒ.— Այս գիշեր Կոնսկում, Ռադոմսկայա նահանգ, իր բնակարանում սպանուած է Վիտերսկի գընդի սպայ Զարնեցկին։

ՄՈՍԿՈՒԱ.— Դեկտեմբերեան ապստամբութեան ժամանակ վնասուողներին օգնութիւն բաշխող յանձնաժողովը սեմեօնովյի երեք սպանուածների ընտանիքներին որոշեց տալ 700 ր., սպանուած 20 ժանդարմների, քաղաքապահ զինուորների և դռնապանների ընտանիքներին— 4750 ր.։

26 յունուարի

ՄՈՍԿՈՒԱ.—Միտրոպոլիտի կարգադրութեամբ խիստ քննութիւն է կատարւում եկեղեցիների տիրացուների միտինգի առթիւ։

Առևտրական - արդիւնաբերական կուսակցութեան բիւրօն կոմիտետներին քննութեան է առաջարկել հողային, հրէական, լրագիր հրատարակելու, արհեստաւորի շահերը պաշտպանելու խնդիրները և այն խնդիրը, թէ ինչպէս պիտի վերաբերուել դէպի միւս չափաւոր կուսակցութիւնները։

Վերջին օրերս անկախների կլուբի կազմի մէջ մտել են 150 հոգի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Գեներալ Լինևիչի ամենահպատակօրէն ուղարկած հեռագիրը Խարբինից յունուարի 24-ից. «Երեկ գեն. Ռենենկամպֆը հասաւ Չիտա։ Ամեն ինչ անցաւ առանց արիւնհեղութեան։ Քաղաքի և երկաթուղու արհեստանոցների կատարեալ զինաթափումը շարունակւում է անարգել։ Ձերբակալուած են 200 յեղափոխականներ գլխաւոր ադիտատորներից։ Ոմանք փախել են։ Ռենենկամպֆը գեներալ Խոլշչևնիկովին հեռացրեց զինուորական նահանգապետի պաշտօնից անգործութեան համար։ Խոլշչևնիկովի տեղ Անդրբայկալեան երկրի ժամանակաւոր զինուորական նահանգապետ նշանակեցի գեն. Սիչևսկուն, Անդրբայկալեան երկրի զօրքերի ժամանակաւոր հրամանատար նշանակեցի գեն. Պալկովնիկովին։ Ըստ Ռենենկամպֆի զեկուցման, Պալկովնիկովի և գեն. Սիչևսկու Չիտայում ձեռք առած միջոցներով Անդրբայկալեան երկրում շատ շուտով հանգստութիւն կտիրէ։ Վլադիվոստոկում և Խարբինում զօրքերի մէջ ամեն ինչ հանգիստ է»։

Գեն. Լինևիչի հեռագիրը գրաֆ Վիտէին Խարբինից յունուարի 24-ից. «Գեն. Արտամոնով Վլադիվոստոկից զեկուցանում է, որ բերդաքաղաքի մէջ անդորրութիւն է տիրում, ադիտատորները լռել են, ոմանք ուզում են փախչել հեռացող շոգենաւերով։ Խարբինի զօրքերի մէջ հանգստութիւն է տիրում։ Վլադիվոստոկից անցնող զինուորական կառքերը փչացել է, հաղորդակցութիւնը Նագասակիի հետ կտրուած է։

ԿԱՍՏՐԱՄԱ.—Բացուած է նահանգական ազնուականութեան ժողովը։ Առաջարկուեց ուղերձ մատուցել Թագաւորին, խնդրելով որ վերացուեն ամենաբարձր պահպանութեան արտակարգ միջոցները. այդ առաջարկը ձայների մեծամասնութեամբ մերժուեց։

ԽԱՐԿՈՎ.—Իշխանութեան կարգադրութեամբ պաշտօնից հեռացրած են զեմստվային մի քանի բժիշկներ։

ԿԱԶԱՆ.— Ոստիկանութիւնը Չերնեազևի փոխադրական գրասենեակում գրաւեց բեռցանի 170 հրացան, որոնք ուղարկուած էին գործարանից և պիտի ուղարկուէին ուրիշ տեղ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Պրոֆեսորների մէջ համոզումն [illegible] է լինում բարձրագոյն դպրոցներում պարապմունքներին սկսելու օգտին։

[illegible] ապահովագրական ընկերութիւնների կառավարիչների համաժողովը քննում է տոկոսաբեր թղթերի արժէքների անկման խնդիրը, նմանապէս և այն խնդիրը, թէ ընկերութիւններն ինչպէս պիտի վերաբերուեն ջարդերից, գիւղական անկարգութիւններից և զինուած ապստամբութիւններից առաջացած վնասներին։

ԿԵՐՉ.—Երեկոյեան, իր բնակարանում, ատրճանակի հարուածով ծանր-

բայց վիրաւորուած է պրիստաւ Նաւորսկին: Գնդակն արձակուած է պատուհանից: Մի քանի մարդիկ բռնել են վազում, սակայն դռները պատնէշուած էին: Զարագործներն անյայտացել են:

ՎԱՐՇԱՒ.—«Кур. Поран.»-ի խմբագիր Թրիգէն դատապարտուած է երկու ամսուայ բանտարկութեան: «Варш. Кур.»-ի տաելով, «Варш. Газ.»-ի խմբագիր Լեշնովսկին որ, ձերբակալուած էր, ազատուեց, ներկայացնելով 300 ռուբ. երաշխաւորութիւն:

ՎԱՐՇԱՒ.—Գիշերը մի քանի զինուած մարդիկ պաշարել են Բլոն գիւղաքաղաքի պոստային գրասենեակը, կառավարիչ Հաեսկուն մահացու կերպով վիրաւորել են, թեթեւ՝ պաշտօնեայ Հերմանին, երրորդին կապոտել և 1300 ռուբ. փող ու մարկաներ են տարել: Հաեսկին առաւօտուայ դէմ վախճանուեց: Կողոպտողներն անհետացել են:

ՊԱՐԻԶ.— Դիւանագիտական շրջաններից ստացուած տեղեկութիւնների համաձայն, ոստիկանութեան վերակազմած նախագիծը, որն Ալժեսիրասում գումարուած կոնֆերէնցիան քննութեան է առել, եւրոպական ոստիկանութիւն կազմել չի ծրագրում, այլ առաջարկում է կազմել մարոկկեան ոստիկանութիւն եւրոպական շրջանակի մէջ, որի մէջ Ֆրանսիան իւր համար պահանջում է առաջնակարգ տեղ: Յոյս կայ, որ խնդիրն այդ հողի վրայ դրուելուց յետոյ, կարելի լինի համաձայնութեան գալ:

ԲԻՐԼԻԶ. — Ուսումնարանական խորհուրդն որոշեց ուսուցչական համաժողովի որոշումը ստորագրող և գիւղական միութեան յարող զեմստվային ուսումնարանի երկու ուսուցիչներին արձակել իրենց պաշտօնից:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. — Ակցիոներական ու ապահովագրական ընկերութիւնների ներկայացուցիչները յունուարի 24-ին ու 25-ին խորհրդակցութեան մէջ միաձայն եկել են այն եզրակացութեան, թէ անհրաժեշտ է անկարգութիւնների ժամանակ այրուածների ու ոչնչացածների վերաբերմամբ եղած բոլոր պահանջները մերժել:

ՊԱՐԻԶ.—Պատգամաւորների պալատը յունուարի 27-ին պէտք է ձեռնարկի ֆրանս-ռուսական առեւտրական համաձայնութեան քննութեան:

ՎԱՐՇԱՒ. — „Кур. Варшавск."-ն հաղորդում է, որ պրուսական երկաթուղային վարչութիւնները նախազգուշացնում են, որ նոր առեւտրական դաշնագրի գործադրութեան առիթով սպասւում է ապրանքի ընդարձակ տեղափոխութիւն Գերմանիայից դէպի Ռուսիա:

ԲԱԳՈՒ.—Մտածւում է նաւթարդիւնաբերողների համաժողով գումարել փետրուարի երկրորդ կէսին:

ՄՈՍԿՈՒԱ. — Կառավարութիւնը թոյլատրել է ստարո-օբրեադցիներին (հին ծէսերի հետեւողներ) համաժողով կազմել:

27 յունուարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.— Վերջին շաբաթուայ ընթացքում Դվինսկ, Պոլտաւայի, Երեւզայի, Տուլայի Վոլկովըշկու գաւառներում, Տորոպցում, Մերվում Բելոստոկում, Լուգանսկում, Նիժնում, Վարշաւում, Վերխնոդուինսկում, Օրղէևում կատարուած խուզարկութիւնների ժամանակ գտնուած են մեծ թուով արագաձիգեր, ատրճանակներ, ռումբեր պատրաստելու լաբորատորիաներ, մի քանի գաղտնի տպարաններ:

Ներքին գործերի մինիստրին ներկայացաւ ղալմուխներից մի պատգամաւորութիւն, որը միջնորդութիւն է յարուցանում ղալմուխների մէջ գիւղական դրութիւն մտցնելու հարցը քննած ժամանակ թոյլ տալ Պետ. Դումայում ունենալ մի ղալմուխ ներկայացուցիչ:

ՆՈՎՈՐՈՍԻՅՍԿ.— Բանտից փախչելու փորձ արեց տեղական պատերազմական կազմակերպութեան անդամ Բալանթաձէն: Բանտի վերատեսուչը ծպտեալ Բալանթաձէի հետքը գտաւ մի գինետանը: Բալանթաձէն դիմադրութիւն ցոյց տուեց, դաշոյնով վիրաւորելով բանտի վերատեսչին, որ ատրճանակի հարուածով ծանրապէս վիրաւորեց փախստականին, որը բռնուած և ուղարկուած է հիւանդանոց:

ՊԱՐԻԶ.—Լուրէն Լոնդոնի դրութեան խորհրդի անդամներին ուղղած իւր ճառի մէջ ասաց, որ իւր նախագահութեան ամբողջ ընթացքում անդադար հետեւել է Անգլիայի ու Ֆրանսիայի միջև համերաշխութիւն ստեղծելու մտքին:

ՏՈԿԻՕ.—(«Ռէյտեր») Մարկիզ Իտօն գնաց Սէուլ: Միկադոն գեներալ Դանիլովին նուիրել է Հայելի պատուանշանի առաջին աստիճանը:

ԻՒՐԵՒ.—Բնագիտական ընկերութիւնը ներկայացուցիչներ ընտրեց և նրանց վրայ պարտք դրեց միջնորդել ընդ.-նահանգապետի առաջ, բանտարկուած դոցենտ Բոգոեւլենսկու ազատութեան համար. այդ մասին նա հեռագրեց նաև ներքին գործերի մինիստրին: Լապունցիներն այստեղից ճանապարհը ընկան Պետերբուրգ:

ԼՈՆԴՈՆ.—(Ռէյտեր). «Տրիբունա»-ին Չիֆուից հեռագրում են հետեւեալը «Կորէայում տիրող դրութիւնն անհաւատալի է: Թագաւորն իրապէս գերի է ճապոնական զօրքի ձեռքում. Նա շրջապատուած լրտեսներով: Դժուարութեամբ է կարողացայ ստանալ այն դոկումենտը, որ հաստատուած է ինքը թագաւորն և կրում է նրա կնիքը:

Այդ դոկումենտի մէջ թագաւորը յայտարարում է, որ 1905 թ. նոյեմբերի 4-ի կորէա-ճապոնական դաշնագրի վերաբերմամբ երբէք ինքը համաձայնութիւն տուած չէ, ոչ մի ժամանակ արտասահմանեան մի պետութեան խնամակալութեան խոստումը չէ տուել, ինչպէս նաև համաձայնութիւն քորէական ներքին գործերը ճապոնական կոնտրոլին ենթարկելու: Այդ դոկումենտի եզրակացութեան մէջ թագաւորը մեծ պետութիւններին հրաւիրում է հինգ տարուայ կոնտրոլ նշանակել քորէական արտաքին գործերի վրայ»:

ՊԱՐԻԶ.—(Հաւաս): Ծովային մինիստր Տոմսոնը ծովային յանձնաժողովին յայտնել է, որ անհրաժեշտ է զրահակիրների և ընդծովեայ նաւերի կառուցման ծովային ծրագիրն ընդարձակել: Մշակուած է ծովային նորակոչ զօրքի հաւաքման և նաւատորմային սպաների կազմն ընդարձակելու մասին նոր օրինագիծ:

ՈՒԱՇԻՆԳՏՈՆ.— Վենեցուէլայի խնդրով, միացեալ նահանգների կառավարութիւնը Պարիզի իւր դեսպանին յանձնարարել է իւր վրայ առնել Վենեցուէլայի շահերի պաշտպանութեան գործը:

ՊԵՆԶԱ.— Այսօր, ժամը 11-ին, սպանուեց ոստիկանապետ Կանդաուրովը: Ոճրագործը բռնուած է:

ԼՈՆԴՈՆ.—«Տրիբունա»-ին հաղորդում են Ուաշինգտոնից, որ ծովային սպաների մէջ խօսւում է, թէ կարող է պատահել, որ ծովային ցոյց լինի Չինաստանի դէմ: Ծայրագոյն Արեւելք են մեկնում զարմեալ երկու յածանաւ:

«Դէյլի Տելեգրաֆ»-ին հեռագրում են Տոկիոյից, որ կանանց ընտրողական իրաւունքի վերաբերեալ օրինագիծը քննուելով հանդերձ իբրև փորձ կանանց թոյլ կը տրուի լինելու քաղաքական կուսակցութիւնների անդամ: Եօթն հոգուց բաղկացած բարձր յանձնաժողով է նշանակուած Մանջուրիայի գործերը վարելու և Մանջուրիայի միջազգային դրութիւնն արդիւնաբերական ու առեւտրական տեսակէտից շահագործելու միջոցները ուսումնասիրելու:

ԱԼԺԵՍԻՐԱՍ.—Յունուարի 25-ին Մարոկկոյի ներկայացուցիչները Մարոկկոյի համար գործողութիւնների կատարեալ ազատութիւն ձեռքբերին արտահանութեան մաքսերի խնդրում: Կոնֆերենցիան ի նկատի առաւ Մարոկկոյի ցանկութիւնը ծխախոտի մենավաճառ մտցնելու, սկզբունք յայտարարեց, որ ամեն ազգի անձերի թոյլ պիտի տրուի մասնակցել աճուրդներին, աֆիօնի, հաշիշի և ծխախոտի մենավաճառին:

ՊԱԼՏԱՒ.—Նահանգապետը դիմել է գիւղական բնակչութեանը մի կոչով, որի մէջ առաջ է բերում յուն. 18-ին Թագաւորի գիւղացիներին ուղղած խօսքերը, նախազգուշացնում է խռովարարների և Ցարի ու հայրենիքի թշնամիների ստայօդ ճառերից, յորդորում է խաղաղ կերպով պատրաստուել ընտրութիւններին, նախազգուշացնելով որ ամեն մի բռնութիւն և իշխանութեանը ցոյց տուած անհնազանդութիւն կը ճնշուի ուժով:

ՎԵՐԽՆԵՏՈՒՐԻԷ.—Պահեստի զինուորներն ամեն օր լցւում են դիմատվային վարչութիւնը և նպաստ են պահանջում, ասելով որ գեն. Լինևիչը հրամայել է նպաստներ տալ ամենքին: Իշխանութիւնները և վարչութիւնը դժուարութիւն նեղ են կրում: Մտադրութիւն կայ արտաքարգ ժողով գումարելու:

ԼՈՆԴՈՆ.—Չեմբերլենն ասում է մի նամակի մէջ, թէ մտադիր չէ իւր թեկնածութիւնը դնել ունիօնիստների պարագլխի կոչման համար և վճռապէս հերքում է այն լուրը, թէ տարիֆների ռեֆորմների խնդիրը կըթողնուի Բալֆուրի հետ ունեցած տարաձայնութեան պատճառով: Եթէ Չեմբերլենի առաջարկները մերժուեն նրա կուսակցութեան մեծամասնութեան կողմից, նա կըկազմէ իւր սեպհական խմբակցութիւնը:

ՀԵԼՍԻՆԳՖՈՐՍ.—Մաքսիմ Գորկու հիւանդ լինելու մասին թերթերի հաղորդած լուրը մտացածին է: Գորկին կատարելապէս առողջ է:

ՎԱՐՇԱՒ.—Գրաֆ Զամոյսկու տանը, որտեղ անցեալները գազի պայթում եղաւ, գտնուած են մի քանի արկղիկներ: Կացնով տուած հարուածից յետոյ նրանցից մէկը պայթեց և վիրաւորեց ջարդողին: Միւս արկղիկների մէջ 12 պետարդ գտնուեց:

ՀՌՈՄ.—Յունուարի 26-ի հրովարտակով թագաւորն ընդունեց Ֆորտիսի կաբինետի հրաժարականը և պատգամաւոր Սոննինոյին յանձնարարեց նոր մինիստրութիւն կազմել:

ՊԱՐԻԶ.—Մօտենում է այն րոպէն, երբ կոնֆերենցիան Ալժեսիրասում պիտի ձեռնարկէ ոստիկանութեան կազմակերպութեան խնդրի քննութեանը: Չնայելով պաշտօնական շրջաններում տիրող լաւատեսութեան, ֆրանսական հասարակաց կարծիքը երկիւղի մէջ է: Ամբողջ մամուլը, բացի «Սիէկլ»-ից, անկարելի է համարում, որ ոստիկանութեան կազմակերպութիւնը յանձնուի սուլթանին կամ միջազգային յանձնաժողովի: «Էքօ դը Պարի»-ի տաելով, այս խնդրին վերաբերւող գերմանական ծրագիրը, որի հետ այժմ ծանօթացել են Ֆրանսիայի պատուիրակները, տրամագծօրէն հակառակ է ֆրանսական ծրագրին:

ԼՈՆԴՈՆ.—Երեկ «Ռուսսէլ-Օտել»-ում ժողով կայացաւ Անգլիայի և Ռուսիայի մերձեցմանը նպաստելու նպատակով: Ժողովը տիկին Նէւմարչի նախագահութեամբ միաձայն որոշեց, որ ներկայ րոպէն ամենից աւելի յարմար է այդ բանի համար:

Խմբագիր-հրատարակիչ՝ ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ Ն. Լալայեանցի գրքոյկը
«ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԿԵԱՆՔԻ ՄԷՋ: I. Ընդհանուր դատողութիւններ»
գինն է 10 կոպ. Օտարաքաղ. 50 օր. ոչ պակաս պահանջ. ստանում են 30% զիջումն. հասցէն. Тифл. Татарская ул. соб. д. полотн. ж. дор.
(108) 5—1

ԲԱՑՈՒԱԾ Է 1906 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ
ԱՐՇԱԼՈՅՍ
ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՕՐԱԹԵՐԹԻ

24 պատկերազարդ յաւելուածներով, որ կանոնաւորապէս լոյս կը տեսնեն ամիսը երկու անգամ:

Թերթի ձգտումն է պետական սահմանադրական կազմ, կովկասեան ներքին լայն ինքնավարութիւն, տեղական զեմստվօ, զեմստւոյական մանր միութիւններ և ազատ կապակցում այդ մանր միութիւնների

Հողի բաւարար բաժիններ սակաւահող գիւղացուն՝ պետական և կալուածական հողերից, և օրէնսդրական բաւարարութիւր բանւորի կենսական պահանջներին:

Ընտրական սկզբունքի լայն գործադրումը ընդհանրապէս, և մասնաւորապէս մեր դպրոցական գործի կազմակերպութեան, եկեղեցական կալուածների տնտեսութեան և հասարակական հիմնարկութիւնների ղեկավարութեան մէջ:

Թերթի գլխաւոր ոյժն ուղղուած կըլինի հայ կեանքի պահանջներն առաջ մղելու և աշխատելու նրանց իրականացմանը զեմոկրատ ոգով:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

	ՌՈՒՍԻԱՅՈՒՄ	ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ			
Տարեկան	7 ր. — —	32 ֆր.	28 մարկ.	28 շիլ.	7 դոլ.
Վեց ամիսը	4 » — —	20 »	16 »	16 »	4 »
Երեք ամիսը	2 » 25 կ.	12 »	10 »	10 »	2 »
Մի ամիսը	— — 75 »	4 »	3 »	3 »	1 »

Տարեկան բաժանորդները կարող են վճարել մաս-մաս յունուար. 4 ր. և յունիս. 3 ր.:

Ապառիկ բաժանորդագրութիւն չի ընդունւում

Կարելի է գրուել խմբագրատանը (Թիֆլիս, Գանովսկայա № 11) կամ գործակալների մօտ: Ուրիշ տեղերից դիմել՝ Редакція газеты «Аршалуйсъ» կամ Tiflis, Rédaction du Iournal «Arschalouis».

Խմբագիր-հրատարակիչ՝ Գ. ՄԵԼԻՔ-ԿԱՐԱԳԵՕԶԵԱՆՑ

ԼՈԶԱՆԻ ՀԱՅԿԱԶԵԱՆ ԳԻՇԵՐՕԹԻԿ ՎԱՐԺԱՐԱՆԸ,

խորովանը օգտակար ըլլալու համար կովկասահայերուն, հաճութեամբ որոշած է ընդունել բացառապէս հինգ կիսաթոշակ (տարեկան 360 րուբլիով) աշակերտ Կովկասէն:

այդ աշակերտներ, մեր միւս սաներու նման, իրենց ընդհանուր կրթութիւնը պիտի ստանան մեր անմիջական հսկողութեան տակ, տեղական-պետական դպրոցներուն մէջ, իսկ հայկականը, ինչպէս նաև թոյլ առարկաներու պատրաստութիւնը՝ վարժարանիս մէջ:

Ռուսահայ աշակերտներէն ռուսահայերուն և, ցանկացողներուն ալ, ռուսերէն լեզու կը դասաւանդուին:

Ընտրութեան մէջ փոքրերը նախամեծարութիւն կունենան:

Ցանկացողները կրնան դիմել մեզ՝ Institut arménien, Lausanne, Suisse, ապահով հասցէով:

Տեսուչ Լոզանի «Հայկազեան գիշ. վարժարանի»՝ Մ. Նալբանդեան

ՀԱՐԿԱՒՈՐ ԵՆ ԳՐԱՇԱՐՆԵՐ

Հարցնել «Նոր-Դար»-ի խմբագրատանը:

Բացուած է նորկայ 1906 թ. բաժանորդագրութիւնը

ԱՂԲԻՒՐ

«ԱՂԲԻՒՐ»-ի նպատակն է զարթեցնել զարգացնել հայ երեխայի մէջ բարի նախանձ դէպի վսեմն ու ազնիւը և տեսլութիւն դէպի չարն ու վնասակարը: «ԱՂԲԻՒՐ»-ը իւր մատաղ ընթերցողների սրտերում ցանում է գթութեան, ինքնաճանաչութեան, անվեհերութեան սերմեր:

«ՏԱՐԱԶ»-ն «ԱՂԲԻՒՐ»-ի հասունացած սաների խորհրդակցութեան և վէճի ասպարէզն է, նրանց մտքերի, զգացմունքների թարգմանը: «ՏԱՐԱԶ»-ը ձգտում է առաջադիմութեան ուղիղ ճանապարհով ընթացող, առաքինութեամբ օժտուած, գիտութեան անշէջ լուսով զարգացած, հայրենասիրութեամբ բորբոքուած հայ անդամներ սնուցանել:

ՏԱՐԱԶ

XXIV մանկական պատկերազարդ ամսագրի XXIV և XVII պատկերազարդ շաբաթաթերթի XVII

«Աղբիւր» եւ «Տարազ» միենոյն հասցէով բաժանորդներին ձրի տրուելու են՝ «Առողջապահ», «Գեղափնջիկ», և «Դաստիարակ» «Իլլիւստրացիօն», որոնց համար առանձին բաժանորդագրութիւն առայժմ իրաւունք չենք համարում մեզ բանալ, քանի որ մեր երկիրը քաօսի մէջ է: «Աղբիւր»-«Տարազ» միենոյն հասցէով բաժանորդ. գրուողը կըստանայ 1906 թ. մեծադիր, հատուածական, պատի օրացոյց, բաղկացած 370 թերթից:

«ԱՂԲԻՒՐ» տարեկան 3 ր. (Արտասահման 5 ր.), «ԱՂԲԻՒՐ»-«ՏԱՐԱԶ» 10 ր. (Արտասահ. 18 ր.) ՏԱՐԱԶ, միայն 6 ր. Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Агбюръ» կամ «Таразъ» Tiflis (Caucase) Rédaction du journal «Taraz» կամ «Agbür»

Խմբագիր-հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

ԹԻՖԼԻՍ
ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՀԻՒՐԱՆՈՑ
ԱՆԳԼԵՏԵՐ
ՀԻՒՐԱՆՈՑԻ ՌԵՍՏՈՐԱՆՈՒՄ

ճաշ՝ 2 տես. կերակուր — 50 կոպ.
ճաշ՝ 3 » կերակուր — 60 կոպ.
ճաշ՝ 4 » կերակուր — 80 կոպ.

Նախաճաշիկ և ընթրիք—ցուցակով:

Հիւրանոցում կահաւորուած սենեակներ— 1 րուբլուց սկսած:

ՕՄԵՆՑԵՏԸ:
10—1

ՄԻ փորձուած հայ վարժուհի, որ աւարտել է գիմնազիոնի IX դասարանը և գիտէ հայերէն, որոնում է դասեր. յօժար է եւ գնալ ուրիշ քաղաքներ: Հասցէն «Նոր-Դար»-ի խմբագրութիւն:
(106) 5—2

Открыта подписка на 1906 годъ
НА ИЛЛЮСТРИРОВАННЫЙ ЕЖЕНЕДѢЛЬНЫЙ ЖУРНАЛЪ
ВОКРУГЪ СВѢТА

Съ 1906 г. журналъ будетъ выходить подъ новой редакціей, которая ставитъ своей задачей, НЕ ИЗМѢНЯЯ ПРОГРАММЫ ЖУРНАЛА, сдѣлать его отвѣчающимъ современному освободительному движенію родины. Въ журналѣ найдутъ себѣ мѣсто очерки и картины, рисующіе современную общественную жизнь культурныхъ странъ. Широкимъ слоямъ населенія Россіи, вступающей въ новый періодъ своей исторіи, необходимо ознакомиться съ тѣмъ, какъ живутъ государства, идущія впереди насъ по пути прогресса, какъ они устроили свою жизнь на началахъ СВОБОДЫ, РАВЕНСТВА и БРАТСТВА.

ВЪ ТЕЧЕНІЕ ГОДА ПОДПИСЧИКИ ПОЛУЧАТЪ:
50 №№ художественно-литературнаго журнала.
Путешествія.—Этнографія.—Романы и повѣсти, изображающіе разныя приключенія на сушѣ и на морѣ.—Очерки и разсказы.—Стихотворенія.—Спортъ.—Картины.—Иллюстраціи.—Портреты. 1.200 столбцовъ текста.

ВЪ КАЧЕСТВѢ ПРЕМІЙ ПОДПИСЧИКАМЪ „ВОКРУГЪ СВѢТА" БУДУТЪ ДАНЫ СЛѢДУЮЩІЯ
БЕЗПЛАТНЫЯ ПРИЛОЖЕНІЯ:
Борцы за свободу.
Альбомъ портретовъ дѣятелей русскаго освобожденія.

24 КНИЖКИ РОМАНОВЪ ЭМИЛЯ ЗОЛЯ,
куда войдутъ слѣдующія произвед. пользующ. всемірной извѣстн. ПИСАТЕЛЯ-РЕАЛИСТА:
Римъ.—Лурдъ.—Парижъ.—Трудъ.—Углекопы.—Правда.

12 ВЫПУСКОВЪ. ПОЛНЫЙ ИЛЛЮСТРИРОВАННЫЙ ОБЩЕДОСТУПНЫЙ ЛѢЧЕБНИКЪ знаменитыхъ русскихъ профессоровъ-медиковъ
„КНИГА ЗДОРОВЬЯ", объемомъ болѣе 1.000 печатн. страницъ, съ 500 оригинальными рисунками.
Подъ редакціей слѣдующихъ профессоровъ-медиковъ: Н. П. Гундобина, С. І. Залѣскаго, А. А. Кадьяна, И. К. Коновнина, П. Я. Розенбаха, лейбъ-окулиста Н. И. Тихомирова и Г. Ю. Явейна.
I. Гигіена, или какъ надо жить, чтобы не хворать. Ред. проф. С. І. Залѣскаго. II. Естественные методы лѣченія, или какъ лѣчиться, не принимая лѣкарствъ. Редак. проф. Н. П. Гундобина. III. Внутреннія болѣзни (легкихъ, сердца, желудка, кишекъ и т. д.). Ред. проф. Г. Ю. Явейна. IV. Дѣтскія болѣзни, гигіена ребенка и уходъ за дѣтьми. Ред. проф. Н. П. Гундобина. V. Хирургія. Редак. проф. А. А. Кадьяна. VI. Болѣзни нервн. системы. Редак. проф. П. Я. Розенбаха. VII. Душевн. болѣзни. Редак. проф. П. Я. Розенбаха. VIII. Глазн. болѣзни. Редак. лейбъ-окулиста, проф. Н. И. Тихомирова. IX. Анатомія и физіологія (жизнь и строеніе челов. тѣла). Редак. проф. Н. П. Гундобина. X. Болѣзни кожи, волосъ и ногтей. Редак. пр.-доц. И. К. Коновнина. XI. Отравленія, несчастные случаи, аптека и домашн. аптечка.
Въ отдѣльной продажѣ „Книга Здоровья" стоитъ 3 рубля.

Кромѣ того, съ приплатою одного руб. подписчики „Вокругъ Свѣта" получатъ ЦѢННОЕ приложеніе—художественно-исполненную въ нѣсколько красокъ картину извѣстнаго художника Н. П. БОГДАНОВА-БѢЛЬСКАГО „ГАЗЕТА ВЪ ДЕРЕВНѢ", снимокъ съ послѣдней его картины, обратившей на себя всеобщее вниманіе на Передвижной выставкѣ въ Москвѣ и Петербургѣ въ 1905 г. и посвященной изображенію отношенія нынѣшней деревни къ послѣднимъ событіямъ русской жизни.
Оригиналъ, съ котораго воспроизведенъ снимокъ, пріобрѣтенъ съ Передвижной выставки за 3.000 рублей.

4 Р. ЦѢНА НА ГОДЪ безъ картины „Газета въ деревнѣ" съ перес. и доставк.
ДОПУСКАЕТСЯ РАЗСРОЧКА: при подпискѣ 2 р., къ 1 апрѣля 2 р., къ 1 іюля 1 р.
Адресъ: Москва, Петровка, д. Матвѣевой. Редакція журнала „Вокругъ Свѣта".
Изданіе Т-ва И. Д. СЫТИНА.
5 Р. ЦѢНА НА ГОДЪ съ картиной „Газета въ деревнѣ" съ перес. и доставк.

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ
ՍՏՈՒԿԷՆ ԵՒ ԸՆԿ.
ԲԱԳՈՒ

Իւր սեպհական պահեստներում մշտապէս ունի

Երկաթ ամեն տեսակի և ձեւի (Листовое, резервуарное, сортовое, фасонное, кровельное и оцинкованное) երկկողանի երկաթէ գերաններ, Ջրհան մեքենաներ «Կամերոն» և «Դուպլեքս», ռուսական գազային խողովակներ և դրանց զօդաւորող մասեր, ֆիտինգներ և այլն: Դուրգեր զանազան տեսակի (станк токарные, сверлилные, строгальные и др.): Մամուլներ ծակող և ուրիշ տեսակներ: Պողպատ՝ զուրեր, կտրոցներ և գործիքներ շինելու համար: Մետաղեայ փոկեր, աղիւս անհալ (огнеупорный), «Գլենբոյգ» և կաւ, բեեռներ (заклепки котельныя, пистонныя): Գամեր զանազան տեսակի, պտուտակներ (болты) և գայկաներ, պղինձ թերթաւոր և կտորներով, պղնձէ խողովակներ, թուջէ ասֆալտած (асфалтированныя) խողովակներ ջրուղիների համար և դրանց զօդաւորող մասեր: Անագ ձողաւոր, արճիճ թերթաւոր և կտորներով, ցինկ թերթաւոր և այլն: Պարագաներ (арматура) պղնձեայ, բրոնզեայ և ձուլածոյ: Գործիքներ զանազան տեսակի, բետոնէ առարկաներ, ցեմենտ, նմանապէս տեխնիքական ամեն տեսակի մետաղներ և իւղեր:

Ներկայացուցիչ է
ՌՈՒՍՏՈՆ ՊՐՈԿՏՈՐ և ԸՆԿ.
Շոգեմեքենաներ, Կերոսինեայ, Նաւթեայ } շարժիչ մեքենաներ
Շոգեսայլեր (локомобилы)
Արգուկներ (катки для шоссе)
ՐԻՉԱՐԴ ՄԱՅԵՐ
Ներկեր զանազան տեսակ
Արճիճեայ ճերմկուց (бѣлила)
Արճիճեայ սուրբ (сурикъ)

ԳԵՐՄԱՆ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՆՆԵՍՄԱՆԵԱՆ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻ
Միակ ներկայացուցիչը
Խողովակները առանց կարի, գազեայ, նաւթահորերի, ծխնելույզի և ջրաբաշխական: Նմանապէս և ամրակուռ խողովակներ խտացուցիչների համար (компрессоръ):
Կայմեր (мачты) անկար խողովակներից, ելեքտրական ուղիների լուսաւորութեան և այլ շինուածքների համար սիւներ հեռախօսական, հեռագրական լարերի և շանթարգելների համար:

Ընդունում է լիովին կառուցման տախտակի, բուրդ լուանող և ուրիշ գործարանների. նմանապէս ընդունում է պատուէրներ այլ և այլ տեսակ տեխնիքական պիտոյքների վերաբերեալ:
Իւրաքանչիւր հարցերին պատասխանում է անմիջապէս:
Արժէքների ցուցակները ուղարկւում են ձրիաբար: —6 (կ.) 52